



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ. Կանանց դերը բնկերութեան մէջՏ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ
ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸԴ. ԶՈՒԳԵԱՆ
ԱՍՏՂԱԲԱՇԻԱԿԱՆ. Երկրագնդի Պատմութիւնը Շար. և վերջ (Քամիւ Զլամ
.....մարտին) Թարգմանութիւն
ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ. Մենաստանն Ս. Սպիրիտոնի ի ՀալէիԵ. Զ.
ՎԷՊ. Մաղէնի մեղքը (ԲՕԼ ԱԼՊԱՆ) Թարգմանութիւն
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաբին, Ներքին, Ազգային:
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (Կղազիէ աը Մօնթէրէն) Թարգմ.Մ. ԶՈՒՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ՔԱԼԱՌՆԵՐՈՒ — տարեկան Կէս ոսկի Օսման.
» » վեցամսեայ Քառ » »
ՄԷԿ ԹԵՐԹԻՆ զինն է 60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան 12 Ֆրանք
» » վեցամսեայ 6 »
Թղթատարութեան ծախք տարեկան Գաւ. արծ. 15
վեցամսեայ » » 7 1/2

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիք և Մասիս լրագրաց
Ղալաթիա, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՎԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 43 Սեպտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	110 1/8
3 » » » (վճռական)	109 3/4
3 » Բարիդի » (պանքային)	22 95
3 » » » (վճռական)	23 02 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Գոնսոյիտե

Երեկ Երեկոյ գոցուեցաւ (Գ. Լ.) ԳՆԻ... ..	8 21
Պորսային գոցուեցին վերջը »	8 22
Յոյսոր Բերայի մէջ »	—
Սուաւօտուն բացուեցաւ »	8 21 1/2
Բարձրագոյն գին »	8 21 1/2
Նուազագոյն »	8 21 1/2
Կէս օրին »	8 21
Իւնիֆիէ Եգիպտական »	66 15
Երեկ Երեկուն գոցուեցաւ »	66 20
Բերայի մէջ »	—
Սոյս առտուն բացուեցաւ »	66 20
Կէս օրին »	66 20
Հէվալէսիզ »	20
Բէբօր գոնսոյիտէի »	—
» Իւնիֆիէի »	—
Փոխառութիւն 1863 (Գ. Լ.)Ֆր. ...	62
» 1865 »	52
» 1869 »	46
» 1873 »	41
Պոն տիւ ԹրէզօրԱնգլ. Լր.	18 50
Բուսէլիի երկաթուղիՖր. ...	43 50
Օպիկասիոն աը Բրիտիթէ »	365
Բաժնեթուղթ Լաւրիօմի »	82

ԲԱԺՆԵՏՈՐՍՔ

Սօսիթէ ԵնէրալԱնգլ. Լր.	3 28
Քրէտի Ենէրալ (Գ. Լ.) ... Օսմ. Լր.	6 30
Պանք աը Գոնս »	5 30
Սօս. Շանօ է վալէօր Օսմ. Լր.	3 30
Թրամոնէյ »	290

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի Ղրշ. ...	400
20 Ֆրանկոն »	87 32
Անգլիական ոսկի »	110 8
Բօլ Իմբերիալ »	90 8
Քրիմից »	51 20
Ռուսկի թղթադրամ »	8 90
» արծաթ »	89 30
Ֆիօրին »	9 2
Մէճ. արծ. (տարբ.) »	108 4
Վէնոց »	102 30

Հինգնոց »	402 30
Մէթալիք »	98
Պղինձ »	800
Թղթադրամ »	3000

ԵՐԹՈՂԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 25 Սեպտեմբեր Ժամ 3 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոնսոյիտէ գոցուեցաւ 101 1/4	
Օսմ. բացուեցաւ 7 15 1/16	
» գոցուեցաւ 7 7/8	
Օսմ. փոխառութիւն 1865 10 1/2	
» 1869 9 1/4	
» 1871 67 1/4	
» 1872 17 1/2	
» 1873 8 1/8	
Փոխառութիւն 1877 79 1/2	
Պանք Օթօման 43	
Ռուսական փոխառ. 73 (գ. Լ.) 93 5/8	
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) 60 1/8	
» առանձն. (բրիտիթէ) 84 1/8	
Տայրա Սանիէ 58 7/8	
Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ) 82 1/4	
Հոնգարական պարտաթուղթ 1877 102 1/8	
Փոխանակութիւն Բարիդի վրայ —	

Վիէնա, 25 Սեպտեմբեր Ժամ 4 Երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ 121 80	
Օսմանեան երկաթուղի 20 60	

Բարիդ, 25 Սեպտ. Ժամ 3 վայր. 45 Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 108 62 1/2	
» 3 0/0 78 20	
Օսմանեան քոնսոյիտէ բանուեցաւ 7 87 1/2	
» գոցու. (գ. Լ.) 7 82 1/2	
» 1865 61	
» 1869 52	
» 1873 46	
Օսմանեան երկաթուղի 43 62 1/2	
» Բէթիի բաժնեթուղթ 520	
Պանք Օթօման 576 25	
Գրէտի Լիօնէ 550	
» Ֆոնսիէ 1314 25	
Բաժնետոմս Լիոնի (գուբ. կար.) 1235	
Սուէզի ջրանցք 1932 50	
Ռուսական 5 0/0 1877 97 3/4	
Իտալական Ռանթ 96 27 1/2	
Եգիպտական միացեալ գոց »	303 75
Սպանիական (արտաքին) 61 1/32	
Բրիտիթէ Թիւրք 370	
5 0/0 Հելլենական 357 50	
Ձէք Լոնտրայի վրայ 25 18	

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 րդ ՏԱՐԻ

1884 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15

ԹԻԼ 3735

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Դ.

Միջին դարու մէջ կանանց վիճակն և իրենց ազդեցութիւնը Եւրոպական քաղաքակրթութեան վրայ. — Թափառեցակէք կամ Թափառաշրջիկ բանաստեղծք. — Սերային ատենք:

Նախընթաց յօդուածին մէջ տեսանք քրիստոնէութեան ազդեցութեան արդիւնքն, որ երկուց սեռից բարոյական հաւասարութեան սկզբման յայտարարութեամբն ո՛ր պիտի նուիրական դեր մ'ստանձնած էին կանայք: Արի նահատակք Քրիստոնէութեան, անվախ և համարձակ հետեւելով Աւետարանի վարդապետութեան, առաքնութեան և անձնուրրութեան ճշմարտ օրինակներ հանդիսացած են, ո՛չ միայն իրենց ժամանակակցաց՝ այլ բոլոր ապագայ սերնդեան:

Ի ծագման աւետարանական արշալուսոյ, կանխաւ ըմբռնելով կանայք ըրենց դերը, անմիջապէս ձեռնարկած են քաղաքակրթութեան մեծ գործին մէջ իրենց մասնակցութիւնն առանց վարանման ինքնաբերաբար նուիրել: Եւ աշխատութեան բաժանման մէջ, որ ընկերական օրինաց սկզբնատարրն է, տնական տնտեսութեան հետ հիւանդաց և անկարողաց խնամատարութիւնն և որբոց պաշտպանութիւնն իրենց բաժին ընտրելէ ի դատ, մինչեւ իսկ իրենց հոգւոյն փրկութեանը համար մենաստաններու մէջ առանձնացած ատեններն, մարդկային ազգին

կրթութեանը համար աշխատին իրենց քաղցր պարտականութիւն են համարած: Միով բանիւ, սորվելու ու սորվեցնելու համար ամենայն դժուարութեանց յաղթելու աշխատեր են:

Այժմ հետազօտեմք թէ ի՞նչ ըրին կանայք այն երկիրներուն մէջ, ուր կարող եղան իրենց գործունէութիւնն մենաստանէն դուրս քաղաքային ընկերութեանց մէջ ի գործ դնելու ազատութիւնն վայելել:

Միջին դարու սկիզբն Եւրոպայի զանազան գաւառներուն մէջ բանաստեղծական ընկերութիւններ կը կազմուէին, որք սովորաբար տարին միանգամ գումարուելով, իրենց ներկայացած տաղաչափեալ նուագներուն ընտրեալ ոյնները կը սրտկէին մրցանակաւ, և հեղինակներն կը քաջալերէին:

Այս մրցումն յարուցած է դաս մը թափառեցակ քերթողաց (1), որք քաղքէ ի քաղք կամ գիւղէ ի գիւղ երթալով, իրենց կամ այլոց յօրինած երգերն հասարակութեան մէջ կը տարածէին: Ասոնք ընդհանրապէս տարօրային նուագներ և ասպետական մեծագործութեանց և առաքնութեանց նուիրեալ ներբողներ կը յօրինէին. բայց ըստ մեծի մասին սէրն էր իրենց նուագոց առարկայն:

Այս թափառեցակներն կրնամք արարական շայէրներուն նմանցնել, զորս մինչեւ ցարդ կը տեսնեմք յԱրեւելս: Եւ իրօք սորա Մաւրիտանացոց Եւրոպոյ մէջ մշտցուցած սովորութիւններէն մին եղած են:

Այս թափառաշրջիկ երդիչներն, թէպէտեւ բազմատեսակ, սակայն երկու գլխաւոր դասու կը բաժնուին: Տաղաչափեալ

(1) Թրուպատուր:

քնարերգութիւնն ասոնց մէկ մասին պարզապէս արհեստն կամ զբաղումն եղած է . իսկ միւսներն անսպարճութեան կամ զուարճութեան համար միայն բանաստեղծութիւններ յօրինած են : Այս դասուն կը պատկանէին շատ մը ազնուականք և մինչեւ իսկ թագակիր գլուխներ . — Կ'յեօմ Գ. Բուադէի կոմսը . — Ֆրէտէրիք Ա. կայսր Գերմանիոյ . — Ռիչարտ-Առլանդսիւս, Անգլիոյ թագաւորը . — Ռէյնոն Պէռանժէ, կոմս Բուրլանտի . — Տայ կոմսուհին . — Առաւիժի թագաւոր մը, Ալֆոնս Բ. — Օռանժի իշխանը . — Սիլվիոյ թագաւորը, Ֆրէտէրիք Բ. և այլն, և այլն :

Սոյն իշխանազունք, այսպիսի զուարթ գործով մը զբաղող ընկերակցութեան մը անդամակցելն իրենց փառք համարելով, կը բարձրացնէին թափառերգական արժանիքն, որով կը մոռցուէր բուն նոյն արհեստիւ պարսպողներուն մեծադոյն մասին ընկերութեան յետին դասուն պատկանին, որոց մէջ կը խառնուէին նաեւ վճուկք, ձեռնածուք և խեղկատակք :

Խաչակրաց ժամանակն այս թափառերգականներն մեծ դեր մը խաղացած են : ԱՍՏՈՒԱԾ և ՏԻՐՈՒՀԻՍ խօսքը, ասպետաց նման ասոնց ալ նշանաբանն եղած է : Այնքալ զտնուեցան շատեր, որք փոխանակ զիրենք ի հեռուն կոչող հաւատոյ ծայնին անսալու, վերընարեցին իրենց տարիատենչիկ տիրուհւոյն սփռքը փարիլ, շատեր վաղեցին պատերազմի դաշտը : Այսու ամենայնիւ յայտնի է թէ, սոքա աւելի սիրոյ բոցովն էին հրավառ, քան թէ հաւատոյ, ինչպէս կը կարծեն ոմանք :

Հարկ է սակայն խոստովանիլ թէ, ըստիպեալ այն ակնածու յարգանաց, զոր պարտէին մատուցանել առ ենթակայն իւրեանց սիրոյ, ի սկզբան սրբիւնչտ և ազնուամտ զգացմանց արտայայտիչներն էին եղած :

Ի՞նչ վնաս և նուիրական է կանանց յատկութիւնն միջին դարու խաւարին մէջն անդամ : Քաջասրտութիւն կ'ազդեն և խանութ : Բանաստեղծն իւր տարիներին կը դրուատէ նուագելով . ասպետք նորա պատուոյն համար կը մենամարտին, և երգումն կ'ընեն նորա հաւատարմ մնալու, որպէս հպատակք իրենց վեհապետին :

Այն ասպետական սէրն էր թափառերգական նուագներն, որ Միջին դարն յղացած էր, հակառակ քաղաքակրթութեան դէմ յարուցած իւր ահուելի խոչնդոտներուն : Աստարեալ հակապատկեր նախնի գրութեան, բարձրացուցած էր կանանց վիճակն այնչափ, որչափ որ նախնիք նուաստացուցած էին զնա : Տէրուհի կամ ֆէլֆէն թէ ոչ բառին կատարեալ նշանակութեամբ, գոնէ ըստ երեւոյթին, բացարձակաբար տիրող անուանած էին զկանայս : Անանց հաճելի ըլլալու համար, ասպետք կը ձեռնարկէին ամենայն վնաս և առաքինի գործոց . շատ անգամ նոցա անձնահաճ պահանջումներն կատարելով հանդերձ, երբէք մատուցած ծառայութիւնն ին բաւական չէին համարեր անոնց արժանի սպասարկութիւն մը ըրած ըլլալու : Իրենց զգացումն միայն իրենք զիրենք կը յագեցնէին . կը սիրէին առանց սիրոյ, և շատ անգամ ալ առանց ցանկութեան :

Այս է, ահա, այն խոտական, երեւակայական վարդապետութիւնն, որով վնասեալ էր Միջին դարու թափառերգականներն . և այս է, նոյնպէս, այն մտացածին նպատակն որոյ հասնիլ կը փափաքէին իրենց տաղերովն :

Դիւրին է մակաբերել թէ այսպիսի սիրատենչ զգացմունք բանաստեղծութեան մէջ ի՞նչ աստիճան վարկութիւն, և բարուց մէջ ո՞րչափ նրբութիւն, ազնուութիւն պիտի սրբուէին : Սակայն դժբաղդաբար, ուշադիր փութիլ հետազոտութեան մը առջեւ, դիւրաւ կ'անհետանան սիրոյ նուիրական զգացումներն, և շատեր կը տեսնուին, որք ո՛չ միայն զայն չէին գործադրեր, այլ մինչեւ իսկ չէին կարող ըմբռնել այդ հոգեբանական զգացումն, և երդւածաբանութեամբ կը ծաղրէին զայն :

Այսու ամենայնիւ սէտք չէ զարմանալ որ միջին դարն կազմող կէս-քաղաքակրթ և կէս-բարբարոս ընկերութեան մէջ զըստնուին բաղնիքի ապերասան և գոհնիկ զգացումներ ալ, որք փափուկ և պարկեշտ զգացմանց հետ արտայայտուելով, նաեւ մատուցած ըլլան այս վերջնոց արժանիքն, և մինչեւ իսկ զիրենք մոլորեցուցած :

Սոքա ո՞րչափ բազմաթիւ ալ ըլլան, դարձեալ չեն բաւեր քրիստոնէութեան ներ-

չընչած աստեատական խոնդը պարզապէս բանաստեղծական ցնորից կարգը դասելու և Սիլվանտի, Վիլմէնի, և Ժիւլ Ֆալբի կարծեաց հետեւելով, աստեատական սէրն իւր պարզութեանը, անմեղութեանը մէջ արտայայտուած ըլլալը բոլորովին ուրանալու :

Հետեւեալ պատմութիւնը կապացուցանէ թէ այս սրտեռանդն ոգիներուն մէջ հաւատքը շատ անգամ յաջողած է իրենց խառնակեաց բարքն ուղղելու :

Կիլյեօմ Գ. Բուադուշի կոմս և Ա. քիդէնի դուքսը, որ թափառեղակաց շարքին մէջ առաջին տեղն կը բռնէ և խաչակրաց գիւցազոններէն մին է, Շաղէրօ դերակոմսին կինը կը փախցնէ, և ամուսնոյն կենդանութեանը նորա հետ կը պատկուի : Բուադուշի եպիսկոպոսը եկեղեցւոյ մէջ զինքը կը յանդիմանէ, և բանադրելու սկսած վայրկեանին, դուքսը սուրը կը քաշէ և եպիսկոպոսին վրայ կը յարձակի : Եկեղեցւոյ պաշտօնեայն, մէկէն ի մէկ շուարած՝ կը լռէ, և շնորհ կը խնդրէ . իսկ վայրկեանի մը մէջ ուշաբերելով, ինքզինքը Աստուծոյ կը յանձնէ և բանադրանքը կ'աւարտէ, ու անմիջապէս դուքսին դառնալով,

— « Զա՛րկ, հիմա, կ'ըսէ, ահա՛ պատրաստ եմ » :

— « Ո՛չ, կը պատասխանէ դուքսը, սուրը պատեանը դնելով՝ չեմ ուզեր վարնել, զի զքեզ արքայութիւն զրկած պիտի ըլլամ » :

Կիլյեօմ ձեռքերն խաչաձեւ, ի ծունր իջեալ՝ ներուզն կը խնդրէ, և կ'երթայ իւրեւ միաբան մենաստանի մը մէջ կ'ապաշխարէ :

Թափառեղակաց ազդեցութիւնը, որ Ֆրանսայի Բրօլանս գաւառին մէջ ծնած էր, Պիրէնեան և Ալպեան լեռներն անցնելով, Արալօնի, Քասպիի, Նոյնպէս և Խոտլիոյ բոլոր հարաւային կողմը կը տարածուի . Ծէր-բարայի, Դուէվիզի, Յունաստանի և մինչեւ Թեոսաղոնիկէի դաւառները կ'ունենան իրենց թափառաշրջիկ երգիչներն :

Փերմանիոյ Փիլիպպոս Բ. կայսեր պալատան մէջ, Բրօլանսի երգիչք աստեղագիտաց, աստեղաբաշխից և էֆէրներուն հետ ի միասին կը բնակէին :

Փօրթուկալի թագաւորութիւնն հա-

տատող Պուրկոնի դուքսը՝ Հէնրիկոս, իւր փառացը մասնակից կ'ընէ այս թափառեղակներն :

Անգլիոյ մէջ, Հոլքարաոս-Առիւծա-սիրտ մականուանեալ թագաւորը զոտա կը պաշտպանէ, որոց ազդեցութիւնը կը տեւէ մինչեւ 14րդ դարու վերջը Շօուէն բանաստեղծին ատենը . Շօուէն զիրենք ծաղրելով հանդերձ, նոցա աստեատական զգացումներովն ներշնչեալ կը յօրինէր իւր բանաստեղծութիւնները :

Այս թափառաշրջիկ քերթողներն մեծ պարոնի մը բնակավայրը դացած Ժամանակներն, շատ մը զուարճութիւններէ և խաղերէ ետքը, կանանց ներկայութեանը, և շատ անգամ նոցա հետ տարիային փափուկ խնդրոց վրայ հակաճառութիւններ կ'ընէին : Սքա դիմառնաբար երգուած նուազներ էին, յորում իւրաքանչիւր երգիչ պարտաւոր էր մի և նոյն յանգերով տուն մը երգել : Երգն աւարտելէ ետքը, երգիչն ինք կ'որոշէր տիկին մը որ դատէ տաղաչափեալ հակաճառութիւնը :

Անշուշտ կանայք անտեղութիւններ նըլմարելով սոյն օրինակ հակաճառութեանց առանձինն դատաւոր կանգնելու, իրենց նրբամտութեամբն հնարած են յետ խորհրդակցութեան վճիռ արձակելու սովորութիւնը : Ասկէ ծաղումն առած կ'երեւի Սքայ կամ Սքայն աբեաններն, որոց մէջ թափառեղակը իրենց դերն և տեղը ունեցած են :

Սիրային ատեանները կը բաղկանային քաջատոհմիկ սեպուհներէ, բանաստեղծներէ և ծննդեամբ և գիտութեամբ ականաւոր տիկիներէ, որոց ամենքն ալ քաղաքավարութեան և այս տեսակ խնդրոց վրայ ընդարձակ հմտութիւն ունեցող անձինք պէտք էին ըլլալ : Կանայք շուտով ստանձնեցին այս դատարանաց մէջ գերադասութեան իրաւունքն : Եւ ստուգիւ սքա պարզ ակումբներ չէին, այլ կանոնաւորաբար և հանդիսապէս կազմեալ դատարաններ էին : Օրինագիրք մ'ունէին իրենց առաջնորդ, Յ1 յօդուածէ բաղկացեալ : Ըսել է թէ զրական օրինաց վրայ հիմնեալ էր իրենց արձակած վճիռներն :

Սոյն դատարանաց ձեռնհասութեան կը պատկանէր աղետաբարոյութեան դէմ

գործուած բոլոր յանցանաց քննութիւնն և վճիռը, ինչպէս նաեւ երկուց սեռից իրարու հետ ունեցած յարաբերութեան մէջ, գիտելի արարողութեանց նկատմամբ ծագած վէճերն քննելու և որոշելու իրաւունքը:

Այս հաստատութիւնն, որչափ ալ արտառաց երեւնայ յաջս ժամանակակից պատմագրաց, այսու ամենայնիւ ո՛չ որ կրնայ ուրանալ թէ սրբա 12րդ դարէն մինչեւ 14րդ դարուն վերջը, գերմանական ծագումն ունեցող ընկերութեանց մէջ կանանց ունեցած զօրութիւնն և ազդեցութիւնն սղապցանելու մեծապէս կը նպաստեն:

Գիւրութեամբ տարածուեցաւ այս դատարանաց թիւն, մանաւանդ հարաւային գաւառներուն մէջ, ուր սիրահարական վէճերն յաճախակի զիրար կը յուզէին: Յանցաւորը կը կոչուէին այս սիրային ատեաններուն առջեւ, և յանցանաց ծանուցութեանը համեմատ պատիժներ կը տնօրինուէին: Սիրահարաց բաժանման և բաժանելոց հաշտութեան եղանակն կ'որոշէին: Ասոնց վրձիւներն երկար ատեն այնչափ մեծ յարգանաց և ակնածութեան ենթակայ էին, որ ո՛չ որ կը համարձակէր նոցա դէմ անսաստել կամ վերաքննութիւն պահանջել ուրիշ դատարանի մ'առջեւ: Իշխանք և վեհագունք անպատուութիւն չէին համարեր նախագահել այս դատարանաց կամ դատուի ի նոցանէ, որոց անդամոց մեծամասնութիւնն իզական սեռէն կը բաղկանար:

Այս սիրային ատեաններն Գերմանիոյ մէջ ալ տարածուեցան Ֆրէտէրիք Պարպրուսի կայսրութեան ատեն: Սրբա խիստ ծաղկեցան ի միջին դաւառս Ֆրանսայի, Հոլլանդի քահանայապետական աթոռն յԱմսթերդամի միջոցին: 14րդ դարուն վերջերը, Իննովկենտիոս Զ. Պապին այցելութիւն ընող Վէնտիմիլի և Թոնրայի կոմսերն հիացմամբ զմայլեր են սիրային ատեանի մը չքեղութեանը վրայ, որոյ ներկայ գտնուած են Պապին հրաւիրանօք:

Յերիտասաներորդ և երեքտասաներորդ դարուց ամենէն երեւելի աշխուական կանայք սոյն դատարաններուն անդամակցութիւն ըրած են: Խիստ նշանաւոր են Նարպօնի գերակոմսուհւոյն, Շամբաների և Ֆլանտրի կոմսուհեաց և Վիլէյէի Էլէօնօր թագուհւոյն սիրային ատեաններն: Կըսեն

թէ Շամբաների կոմսուհւոյն սիրային ատեանի մէկ նստին մէջ 60 տիկնայք իւր բոլորտիւք դուամարուեր են վճիռ մը արձակելու համար: Էլէօնօր թագուհին 1147 ին, երկրորդ Խաչակրաց ժամանակ, Յրուսաղէմ դաշած միջոցին, բազմութիւ կանայք իրեն ընկերակցելով, պատերազմի դաշտին վրայ իրենց ատեաններն կը կազմէին, և շատ անգամ թագուհւոյն նախագահութեանը տակ դուամարուելով, իրենց ձեռնհասութեան պատկանեալ վէճերն կը դատէին:

Ռաուլ տը Գուսի բերդակալը, 1191 ին Աքեայի պաշարման մէջ, վերջին շունչը աւանդած վայրկեանին կը յանձնարարէ իւր զինակիրն որ իւր մահուանէն ետքը սիրտը տանի յանձնէ տիկնոջ մը, զոր յանչափս յարգած ու պաշտած էր: Զինակիրն իրեն եղած յանձնարարութիւնը կատարելու միջոցին կը բռնուի ամուսինէն: Սա, տարօրինակ վրէժխնդրութեամբ նախանձու, կերցնել կուտայ այդ սիրտը իւր կնոջը, որն որ յետոյ խմանալով գլխուն եկածը, կ'երդնու բերանը բան մը չգնել և անօթութենէ կը մեռնի: Ոմանք կ'ըսեն թէ տիկին տը Ֆոյէլ եղած է, իսկ ոմանք Կապրիէլ տը Վիրթին կը կարծեն այս ողբերգական հանդէսին գիւցաղնուհին: Բայց ո՛չ որ կը պատմէ թէ ի՞նչ պատիժ տնօրինած են սիրային ատեաններն սոյն ոչ կնահաճոյ ամուսնուոյ . . . : Հետաքրքրական է գիտել թէ, ասոնց վրձիւներն միշտ պարտաւորիչ եղած են գործադրութեան, նոյն իսկ իշխանաց համար:

Կարողոս Երդ մասնաւոր սիրային ատեան մը հաստատած էր իւր պալատին մէջ, որոյ վեհապետն ինքն եղած էր և անդամներն տասն և մէկ դասու բաժնուած էին, պալատականաց զանազան պաշտօններուն համեմատութեամբ: Բայց կանայք չէին կրնար բազմիւ իրրեւ գատաւոր սոյն ատեանին մէջ:

Ուրիշ ատեան մ'ալ Խոնարհութեան և հասարակութեան վրայ հիմնուած էր, ի պատիւ կանանց, 1400 ին ի Փարիզ տ'Արդուա կոմսին ապարանին մէջ, որոյ գահերէցն Իշխան Սերայն Առէնի կը կոչուէր: Երեք մեծ խնամակարներ ունեցած է, որք ի սկզբան Կարողոս Երդ արքայն Ֆրանսայի, Ֆիլիպ դուքս Պուսկօնի և Պուրպօնեան Լուի դուքսն եղած են: Բազմութիւ պահապանք կամ հոգաբարձուք, 24 ատենի պաշտօնակալք,

ճարտասան և միանգամայն բանաստեղծ ըլլալու պայմանաւ, պաշտօն ունէին ատենին ներկայացնել այն ամենայն գրութիւնը որը քննադատութեան ենթարկեալ էին :

Այս վերջին դատարաններէն տիկնանց արտաքսումը չեմք գիտեր ի՛նչ բանի պէտք է ընծայել : Արանց ամբարտաւանութեանը, որ տեսնելով իզական սեռին սակաւ առավաւ ստացած գերազահութեան և ազդեցութեան զօրանալն, սկսած են նախանձիլ, թէ սիրային ատեաններուն իրենց նախնական պարզութենէն հեռանալուն պատճառաւ տեղի տուած զեղծմանց հետզհետէ աւելնալովն, կնոջ նուիրեալ ակնածական յաղգանաց կամ մտաց յախտակութեան պակսելուն :

Ստուգիւ, եթէ այս ատեաններն ի ըսկըզբան ծառայած են բարուց ազնուացման, և կնոջ բարոյական հաւասարութեան գաղափարն ժողովրդեան մէջ տարածելու նըպատած, ի վերջոյ, միջին դարու բոլոր հաստատութեանց նման, զեղծումն կերպարանափոխ ըրած է իրենց բնական վիճակն : Փոխանակ սղնուամիտ գաղափարաց քարոզութեամբ կանանց դիրքը բարձրացնելու և բազմաթիւ իրաւանց և կրթութեան ամեն ճիւղերու մէջ իրենց հաւասարութեան իրաւունքը պաշտպանելու, արտառոց գաղափարներ յայտարարած են վսեմ զգացմանց հետ : Իրենց օրինադրին, զոր վերը յիշեցինք, Ա յօդուածը կ'ըսէ թէ « Ամուսնութիւնը, սիրոյ դէմ, ներսն օրինաւոր պատճառաբանութիւն չի համարուիր . . . » :

Կ'երեւայ թէ, ի սկզբան, արք սոյն յօդուածն միմիայն ի նպատտ իւրեանց տրամադրեալ համարած՝ և այնպէս մեկնած են : Իսկ երբ հաւասարութեան գաղափարն ընդարձակելով, կանայք ջանացեր են քիչ կամ չատ իրենց ալ բաժին հանել այս սիրային կարկանդակէն, հաւասարութիւնն ասկերասանութեան առաջնորդելով, անհամար զեղծմանց տեղի տուած են : Ա բարուց խանդարումն արտադրելու վառաբաններ դառնալով սոյն դատարանք, իրաւամբ արանց և իրենց սեռին պատուոյն նախանձխնդիր լրջամիտ տիկնանց չընորհիւ կամաց կամաց խափանուեր են :

Տ. ՆՈՒՍՈՒՖԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Յունաց Պատրիարքարանի ներքին կազմակերպութեան մասին հետեւեալ յօդուածը մեզ կը հաղորդէ մեր յարգելի աշխատակից Տ. Էֆ. Չօլազեան, որ իրեն պարականութիւն համարած է Յոյն և Հայ ժողովրդոց գործերն միմեանց փոխադարձաբար ծանօթացնելու :

Յունաց Կ. Պոլսոյ Պատրիարքարանն երկու վարչական մարմիններ ունի, որը կանոնաւոր կերպիւ և որոշեալ օրերուն մէջ իրենց նստերը կ'ընեն. Ս. Սինոդն և Խառն Ժողովն : Արեւմտեանական Ազգային Ժողովը միայն այն ժամանակ կը գումարուի՝ երբ Պատրիարքի ընտրութիւն կամ յոյժ կարեւոր ազգային խնդիր մը ծագի, որ թէ՛ Ս. Սինոդին և թէ՛ Խառն Ժողովոյն իրաւասութենէն վեր լինի : Ս. Սինոդն, որ սովորաբար տասն և երկու մետրապոլիտներէ կը կախանայ, նախագահութեամբ Պատրիարքի՝ չարաթն երեք անդամ իւր նիստերը կ'ընէ. իսկ Խառն Ժողովն, որ նոյնպէս տասն և երկու անդամներէ կը բաղկանայ՝ որոց չորսը կը երական և ութն աշխարհական են, նախագահութեամբ առաջնութիւն ունեցող մետրապոլիտի մը՝ չարաթն երկու անդամ կը գումարուի : Ս. Սինոդն և Խառն Ժողովն երեք զրադիքներէ բաղկացեալ մասնաւոր դիւաններ ունին, որոց գործն է ատենագրութիւնները պահել, տրուած վճիռներուն պատճենները խմբագրել և այլն : Աստուծոյ ի վատ կան նաեւ այլ և այլ գործոց համար մասնաւոր դիւաններ, որոնք նոյնպէս երեքական զրադիքներէ կը բաղկանան, և են. — Բ. Գրան հետ թղթակցութեան դիւանն, Պատրիարքին և Սինոդին արտաքին գրութիւնքը խմբագրելու դիւանն, Ֆրանսերէնի և Սլաւական լեզուաց դիւանն, անցադրոց դիւանն, հաշուակալութեան և վանձապետի դիւանն, եկեղեցեաց հաշուակալութեան դիւանն, քահանայական և աստուածաբանական վարժարաններուն դիւանն, և ի Պատրիարքարան մտնող կամ ելող ո՛ր և է գրութիւնքն արձանագրուելու (†բժշկութեան) դիւանը :

Պատրիարքական Փոխանորդէն ի զատ՝ յարատեւ կը կենան ի Պատրիարքարան տասն և երկու արչիմանտրիտ մեծ արչիմանտրի-

տի մը հսկողութեամբ, աւագ սարկաւադն, երկրորդականն և երրորդականն ի սարկաւադունս, վեց վարդապետ պաշտօնեայք (Եսապֆֆէ) փոխանորդարանի, վեց բարեկարգիչ (Էֆֆաֆֆա) սպասաւոր պաշտօնեայք աւագսարկաւադարանի, տեսուչն Մայր Եկեղեցւոյն և այլ ստորին կարգի պաշտօնեայք :

Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ 117 մետրապոլիտական թեմեր կային, բայց քաղաքական նորագոյն հողային բաշխումներու պատճառաւ 16 թեմեր պակսած են այժմ և կը մնան միայն 101 թեմեր :

1862 թուականին խմբագրեալ և Կայսերական Կառավարութենէ վաւերացեալ ազգային կանոնադրութիւնն՝ որուն կիրառութիւնը յիշեալ թուականէն մինչ այժմ կը շարունակէ, որոշած է բոլոր մետրապոլիտաց համար՝ իբր տարեկան թոշակ, վեց միլիոն դրուշ, որը կը հաւաքուին տարուէ տարի 6 էն մինչեւ 10 դրուշ իւրաքանչիւր դաւառաքնակ ընտանիքէ : Իւրաքանչիւր մետրապոլիտ իւր ունեցած աստիճանին համեմատ առած թոշակէն որոշեալ տարեկան տուրք մը կուտայ, առանց ո՛ր և է պատճառաբանութեան, ազգային կեդրոնական գանձատան, որով թէ՛ Աստուածաբանական վարժարանին ծախսն և թէ՛ Կ. Պոլսոյ Պատրիարքին թոշակը կ'ապահովի կատարելութեամբ : Մետրապոլիտք իրենց յատկացեալ տարեկան թոշակէն ի վատ ժողովրդէն առաւել ինչ պահանջելու իրաւունք մը չունին, այս տարբերութեամբ որ՝ իւրաքանչիւր պատկի հրամանիէն և թաղ ունեցող քահանայէն տարուէ տարի տասնական դրուշ ստանալու արտօնութիւն ունին : Մետրապոլիտն իրաւունք ունի նաեւ առ նուազն 50 դրուշ առնել յատկապէս կրօնական արարողութիւն մը կատարելու համար զինքն հրաւիրող անձէն : Մետրապոլիտարանին ո՛ր և է ուրիշ հասոյթներն (որպէս են զոր օրինակ գրութիւն մը վաւերացնելու, կնաթողութեան հրամանիւն և այլ գործողութեանց համար՝ Պատրիարքարանի ի կիրառեալ մասնաւոր կանոնադրութեան համեմատ առնուած ստակները) նոյն թեմին մարգարտական և կամ ուսումնական հաստատութեանց կը վերաբերին :

Կ. Պոլսոյ Պատրիարքարանին տարեկան ծախսը 1,165,000 դրուշի կը հասնի : Այս գումարը կը հայթայթեն Բումէլիի մէջ եղած մենատոտները, Բումանիոյ մէջ ազգային կալուածոց հասոյթներն⁽¹⁾ և Պատրիարքարանի դիւաններուն և գործողութեանց համար առնուած տուրքերը :

Տարեկան թոշակ Պատրիարքին 500,000 դրուշ է, որոց 570,000 դրուշը մետրապոլիտք և 130,000 դրուշը Կ. Պոլսոյ և չընկայից եկեղեցիներն կը վճարեն : Պատրիարքը, վերոյիշեալ թոշակով, միմիայն իւր անձնական և բարձր աստիճանին պահանջած արժանաւայել կերպիւ ապրելու ծախսերը կը հողայ, առանց մասնակցելու Պատրիարքարանի ո՛ր և է ծախսոց :

Պատրիարքարանի գանձին տուեալ տարեկան թոշակներն են.	Ղըշ
Պատրիարքական Փոխանորդին	24,000
Ս. Սինոդի դիւանին	27,000
Խառն Ժողովոյ »	72,000
Թուրքերէնի »	78,000
Մայր եկեղեցւոյ տեսչին	12,000
Գործակատարաց Բ. Դրան և ոստիկանութեան	90,000
Փոխանորդարանի և աւագսարկաւադարանի վարդապետաց	72,000
Սինոդական անդամոց ծախսոց և անկեալ կրեւականաց	250,000
Պատրիարքարանի քարոզչի	24,000
Նպաստ հիւանդանոցի	500,000
Պատրիարք . ջրհաններու և այլոց	50,000
Թոշակ ծերացեալ պաշտօնից և ազքատաց Զատիկի և Մննդեան	100,000
Նպաստ Մայր Եկեղեցւոյ	50,000

Որպէս ծանօթութեամբ ըսինք, բացի պատրիարքական թոշակէն, բոլոր միւս տարեկան թոշակներն՝ այժմեան դրամական

(1) Բումանիոյ մէջ եղած ազգային կալուածներն՝ որոց տարեկան հասոյթն 60,000 գրիմիճի կը հասնի, և որոց միայն 6,000 գրիմիճը Պատրիարքարանի ծախսոց յատկացեալ են, բաւական տարինքէ ի վեր տեղական կառավարութիւնէն գրաւեալ կը մընան տոկաւին : Թէեւ դեսպանական մարմինները յանձն առած են այս խնդիրն լուծել, ըստ մարդկային կեկեղեցւոյն, սակայն դեռ գործն առ կախ կը մնայ. իսկ այն 6,000 գրիմիճի զրկանքը մասամբ իւրեք կը լեցնեն, մեծաթուհներու դրամական առատ պարգեւներն և Պատրիարքարանի հետեւած խնայողական ընթացքը :

անձկութեան պատճառաւ չեն վճարուիր , այլ անոնց գրեթէ երեք քաւորդը միայն կը տրուի Պատրիարքարանի պաշտօնէից : Նոյնպէս սինոդական անդամոց ծախսերն և հիւանդանոցի համար յատկացեալ նպատար բաւական տարիներէ ի վեր չտրուիր , չնորհիւ իւր գնած անշարժ կալուածոց , հիւանդանոցը իւր վիճակն ապահովցուցած լինելով :

ԱՍՏՂԱԲԱՇԻԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆՏԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Երբեմնակօնքն և վերջ)

Երկրիս պատմութիւնը ուսումնասիրելը՝ միանգամայն տիեզերաց և մարդոյս պատմութիւնը ուսումնասիրել է . որովհետեւ Երկրիս տիեզերաց մէջ աստղմէ , և մարդն՝ ամեն երկրային գորութեանց արտադրութեան է :

Այսօր , ո՛չ որ այլ կրնայ հաւատալ որ աշխարհս վեց օրուան մէջ ստեղծուած ըլլայ , և ո՛չ ալ վեց հազար տարի առաջ անասունք արարչի մը ձայնէն երկրէս յանկարծ բղխած ըլլան՝ ձեւակերպեալք , չափահասք , արու և էգ , զոյգ զոյգ . փղէն սկսեալ մինչեւ լուսն և մինչեւ մանրագիտաւ տեսանելի մանուկք . թէ առաջին ձին բլրէ մը ընդոստուցեալ ըլլայ , և ոչ ալ առաջին կաղնին բազմադարեան ստեղծուած ըլլայ : Ոչ որ այլ կրնայ ընդունիլ որ մարդկային մարմնոյն բնական կազմութիւնը ընդհանուր ստնաւորաց կազմութենէն տարբեր ըլլայ : Այսօր ամեն մարդ գիտէ որ ի ներկայումս գտնուած կենդանիները Աստուծոյ ստեղծածները չեն , այլ նախնական , տարբեր , բայց ոչ թէ օտար տեսակներ նախնութեանց եղած են անոնց , որոնք Մովսիսի ժամանակ ճանչցուած չէին : Ամեն մարդ գիտէ որ մեր գունտը չատ հին է , և իրեն երկրաբանական խաւերը՝ աներեւութացեալ դարերու բրածոյները կը ծածկեն . ամենայն որ տեղեակ է որ դեռ ունինք մեր մէջ գործարաններ որ մեզի բանի մը չեն ծառայեր , և որոնք մեր անասուն նախահարց մէջ եղող գործարանաց հետքերն են :

Ոչ որ կ'անդիտանայ որ ամեն մէկերնիս չի ծնած՝ մեր մօրը արդանդին մէջ յղութեան առաջին ամիսներէն սկսեալ թուլատար , ձուկ , սողուն , չորքոտանի եղած եմք , բռնութիւնը ի փոքուն հաւաքաբար կատարած է իւր հին ժամանակաց մեծ գործառնութիւնները . ոչ որ կ'անդիտանայ վերջնապէս որ ամեն կենդանի սերունդներ՝ մի եւ նոյն չլթայի օղակներուն պէս յարակից են . անգգալի կերպիւ մէկ մէկու անցած . ամենէն պարզ և տարրական էակներով սկզբնաւորուած է կեանքը երկրիս վրայ , այնպիսի տունկերով որ՝ ոչ տերեւ , ոչ ծաղիկ և ոչ ալ պտուղ ունենալով՝ հազիւ թէ տունկ կրնան ըսուիլ , այնպիսի անասնօք որ ոչ գլուխ , ոչ գգայարանք , ոչ անդամք , ոչ ստամոքս , ոչ տեղախոխութեան միջոցներ ունենալով , հազիւ թէ անասուն կրնան կոչուիլ , և տակաւ առ տակաւ , անգգալապէս , աստիճանաբար , օդին և ջուրին , կլիմային , գտնուած վիճակներուն և իրենց առած անդեան աղբեցութեան ներքեւ , աւելի կենդանի , աւելի զգայուն , աւելի անձնական , տեսանին աւելի որոշ , աւելի կատարելագործեալ ձեւի մը վերածուած են վերջնապէս գալու յանդերձ համար այդ գեղեցիկ և խնկաւէտ ծաղկանց , որ արդեան դաշտաց զարդերն են , անտառաց մէջ երգեցիկ թռչնոց . . . նախնաւանդ մարդկային էակին որ ամենէն բարձրագոյնն է և գերի վերոյ կենդանեաց կարգին մէջ : Այո՛ , մեր արմատներն անցելոյն մէջ են , մեր ոսկերաց մէջ ունինք դեռ հանքային մասունք , մեր նախահարց կենդանեաց զարմին հայրենական ժառանգութեան ընտրեղագոյն մասը ժառանգած եմք և ինչ ինչ տեսակէտով բուսականէն ալ հետքեր ունինք միանիս . միթէ չե՞նք զգար զայդ գարնան արեգի օրերուն մէջ , յորում սնուցիչ հիւթն աւելի ուժգնութեամբ իւր շրջանը կը գործէ փոքրիկ ծաղկանց և յաղթանգամ ծառոց երակաց մէջ :

Մարդկային էակը , երկրային արարածոց թագաւորը , ուրիշ կողմանէ այնքան կըղզիացեալ , զատ և որոշ չէ բոլորովին իր նախահարցմէ , և ոչ ալ երեւցածին չափ ինքնուրոյն անձնական և մտաւորական , ինքն յինքեան չատ տարբեր է և զանազանեալ իւր արտայայտութեանց մէջ : Տասն և չորս

հարիւր միլիոն մարդկային էակաց մէջէն որ կ'ապրին հողագնոտոյ մակերեւութին վրայ, ոչ միայն բոլորովին վայրենի երկիրներ, ոչ միայն կեդրոնական Ափրիկէի ցեղերու մէջ, կամ Սամոյիտներու և Հնոյ երկրին բնակչաց մէջ, բայց նաեւ քաղաքականացեալ ժողովրդաց մէջ, միլիոնաւոր անձինք կան՝ որք չեն խորհրդ, որ իրենք իրենց հարցուցած չեն՝ ինչո՞ւ համար կ'ապրին երկրիս վրայ, որք և ոչ մէկ բանի մը հետադրգութիւն կ'զգան՝ ոչ իրենց ձախտազրկին, ոչ մարդկային պատմութեան, և ոչ մարդկաց, որք չեն գիտեր թէ ուր են, և հողերնին չէ միով բանի՝ բոլորովին անասնոց յար և նման կ'ապրին: Խորհող և խոհականութեամբ ապրող մարդիկ մեր տեսակին մէջ՝ փոքրաքոյն մաս մը կը կազմեն, թէեւ այսպիսեաց թիւը օրէ օր յաւելնալու վրայ է: Գիտնական հետադրգութեան զգացումը արթնցած է և երթալով կը զարդանայ: Անդանեաց ցեղին զգայարանաց կատարելագործութեան և ուղեղին մէջ յամրաքայլ արտայայտուած յառաջագիմութիւնը կը շարունակէ նոյն իսկ փորձը մեր տեսակին մէջ կը տեսնենք, որն որ երբեմն բիրտ, կոպիտ և խուժ՝ այսօր աւելի զգայուն է, աւելի փափուկ և աւելի մոտաւորական. թերեւս ուրիշ ամեն տեսակէն աւելի շուտ մարդս կը փոխուի: Այլ որ 100,000 տարի վերջը վերադառնայ յերկիր, չգիտի կարենայ ճանչնալ մարդկութիւնը:

Արդէն իսկ եթէ այսօր զմեզ վիմեղէն դարուն մեր նախահարց բաղդատելու ըլլանք, անկարելի է յայտնի յառաջգիմութիւն մը չնշմարել մեր վրայ՝ թէ՛ բարոյական և թէ՛ բնական տեսակէտով: Մի և նոյն արք և կանայք չենք, մասաց և մարմնոյ վայելչութիւն նրբացած և աշխուսեցած են. միւսինքն այնչափ ուժով չեն բայց ջիւղերը աւելի զարգացած. ներկայ դարուս մէջ այլ մարդը ոչ այնչափ յաղթանդամ է և ոչ այնքան պընդակազմ. անզգայի կերպիւ ուղեղը կը տիրապետէ: Արդի կընը՝ աւելի արուեստական և աւելի նրբին է, միանգամայն աւելի ճերմակ, մազերը աւելի երկայն և թեւերը մետաքսի պէս. նայուածքը աւելի վճիտ, ձեռքերը փոքրիկ, թուլութիւնը աւելի մեղկաւէտ: Մերթ ընդ մերթ բարբարոսաց արշաւանք ամեն բան տախնուլրայ կ'ընեն, և

ջատուումը կը կասեցնեն. բայց այդ առժամանակեայ դադարում մ'է, անցաւոր միջիկ մ'է. ամբողջութիւնը անսահման փափաքանօք դէպի լաւագոյն և մոտացածին ու երազածին յափշտակուած է: Այլ խնդրէ, զի՞նչ. ոչ որ գիտէ. այլ մշտ կը ցանկայ և այդ ցանկութիւնը զմարդկութիւն վարեալ կը տանի աւելի յառաջացած այլ երբէք ոչ շատացած մոտաւորական վիճակի մը: Գանկը զուգեղը կը կաղապարէ և մարմինը՝ միտքը:

Անդամոց գործածութիւնը աւելի գործողները կը զարգացնէ. որոնք որ մոռացութեան մէջ կը թողնին՝ երթալով կը նուազին և վերջապէս կը ծիւրին: Մարդկանց հասակէն՝ դարու մը բարբերը կրնան հասկըցուիլ: Թէեւ մեր օրերը առերեւոյթ ճշմարտանմանութեամբ կարենայ հաստատուիլ թէ « ուժը յաղթող է իրաւանց », միտքերը բաւական լուսաւորեալ են ըմբռնելու համար թէ այդ բոլորովին սուտ դրութիւն մ'է: Օր մը պիտի գայ յորում ո'չ բանակք և ո'չ պատերազմներ տեղի պիտի ունենան, յորում՝ մարդս ամօթահար պիտի զգայ ինքզինքը՝ տեսնելով որ զօրագնդեր սնուցանելու համար միմիայն կ'աշխատի, և յորում՝ Ֆրանսա, Աւստրալիա, Ալժիր, Ամերիկա, ազատաբար պիտի շնչեն՝ յանձանց ի բաց թօթափելով և աղբանոց նետելով այդ անարգ յիմարութեան և բորոտութեան վերարկուն՝ զոր պատերազմական ծախսուց հաշուեցոյց կը կոչեն:

Այլ, հարիւր հազար տարի ետքը եկողը երկրիս վրայ՝ չպիտի կարենար ճանչնալ մարդկութիւնը. մեր խօսած լեզուներէն և ոչ մին պիտի մնայ, բոլորովին տարբեր լեզու մը պիտի խօսին: Արդեան ազգացմէ և ոչ մին, մայրաքաղաքներէն և ոչ մին. զարգացեալ քաղաքականութիւն մը լուսաւորած պիտի ըլլայ կեդրոնական Ափրիկէն: Աւստրալիա Սմերթիկայի վրայէն անցած պիտի ըլլայ ճենաստանը երթալ գտնելու համար: Միջնորդին մէջ օգանաւերով անցուդարձ ըլլալով՝ տէրութեանց սահմանները պիտի վերնան և ազատութիւնը բարձրագլուխ պիտի ընթանայ Աւստրալիա-Ասիոյ Միացեալ Նահանգաց մէջ: Նոր բնագիտական գործիքներ պիտի գտնուին, և լուսաճայնական տեսակ մը հեռագրով մօտակայ մարդկաց բնակչաց հետ խօսակից պիտի ըլլանք:

Նրկիրս անդադար կը փոխուի — յարա-
քայլ վասն զի երկայնակեաց է — բայց մըշ-
արնջնաւորապէս : Հոս ծովը՝ քարաժայռե-
րը կը փշրէ և երկրիս ներսերը կը խուժէ,
հոն ընդհակառակն գետերը աւազ կը կը-
րեն, եռանկիւններ կը կազմեն՝ ծովափնեայ
գետաբերաններ որ ծովուն մէջ կը յառա-
ջանան : անձրեւը և հորը՝ լեռները գետոց
և Ովկիանոս մէջ կ'ըջնեն, ստորերկրեայ
գորութիւնք ուրիշ ցամաքներ վեր կը հա-
նեն, հրաբուխք կը քանդեն ու կը շինեն .
ծովուն և օդուն հոսանք կ'իմաները կ'այ-
լայլեն, պարբերաբար եղանակները կը փոխ-
ուին : ասեմք կ'այլակերպին, ո՛չ միայն մարդ-
կային մշակութեամբ, այլ նաեւ պարագայից
զանազանութեամբ : քաղաքաց թռչուններ
այսօր իրենց բոյներնին՝ մարդկանց ձեռա-
գործ կտակերինօք կը շինեն : մարդաշէն
քաղաքներ կը ծնանին, կ'ապրին ու կը մեռ-
նին : հրաշալի մըլում մը ամեն բան իր ըն-
թացքին մէջ կը քէշ կը տանի : Նրեկոյեան
չքնաղ պահուն յորում մենաւոր բլրոց լան-
ջակողման վրայ նստած, աշխարհիս ազմուկ
ու ժխորէն կը փախչինք՝ բնութեան խոր-
հրդաւոր տեսարաններուն : ակնատես և
հազորդ ըլլալու համար, այն ժամուն յորում
արեւը իւր ոսկեհոս ծիրանի անկողինը կը
մոնէ, յորում լուսնին մահիկը, երկնային
նաւակ, եթերական կապոյտ ովկիանուն մէջ
գայ յերեւան, և յորում առաջին աստղը
կ'սկսին վառիլ անհունութեան մէջ, այն
ժամանակ կը կարծենք թէ ամեն բան կը
հանդէպ կատարեալ մեր շուրջը, և թէ բնու-
թիւնը կ'սկսի քաղցր քուն մը քաշել : Այդ
երեւոյթը խաբուսիկ է : բնութեան մէջ բը-
նաւ հանդիստ չիկայ, միշտ աշխատութիւն՝
ներդաշնակ, կենդանի և մշտնջենական աշ-
խատութիւն : Նրկիրս անշարժ կ'երեւայ .
ընդհակառակն ժամը 26500 փարսախ արա-
գութեամբ որ ըսել է հազար հարիւր ան-
գամ ամենէն սրարչաւ չոգեկառքի արագու-
թեամբ՝ անսահման տարածութեան մէջ
զմեղ յափշտակեալ կը տանի : Նուսինը կայ-
նած կ'երեւայ . ընդհակառակն՝ արեւուն
շուրջը մեր ընթացքին կը հետեւի, և մեր
շուրջը կը յածի մեկ մանրերկրորդի մէջ
1000 մէղրէն աւելի ընթանալով, ամեն
վայրկեան իւր ձգողական գորութեամբը
ներգործելով մեր գունտին վրայ՝ անհան-

գիստ ընելու համար զայն, առաջ ետեւ
քաշելով, մակընթացութիւններ սրտաճառե-
լով եւայլն : աստղերը մեզի հաստատուն
կ'երեւան : անոնցմէ իւրաքանչիւրը՝ խելքէ
մտքէ գուրս անըմբռնելի արագութեամբ,
ժամը երկու երեք հարիւր հազար փարսախ
հեռաւորութիւն յառաջ կը վազեն : Արեւը
կայնած կ'երեւայ, միշտ կը փայլի : գիշեր
ի՛նչ է՝ երբէք չէ գիտցած : սաստիկ բոցա-
փայլութեամբ պարփակեալ անդադար,
շուրջը կը ցոլացնէ լուսոյ և ջերմութեան
հոսանքներ, չորս հինգ հարիւր հազար հա-
զարամեղր բարձրութեամբ հուր կը ցայտէ
և կրկին վար կը ձգէ բոցավառ կրակի պէս՝
մշտատուր արեգակնային ովկիանոսին երե-
սը : Գետը որ ոտքերնուս ներքեւ ջրնջ հայ-
լի մը պէս հանդարտ կը թուի, կը սահի կը
վազէ անդադար՝ տանելով անձրեւաց ջուրը
որ միշտ կ'իյնան ամպերէն՝ որոնք միշտ
կը կազմուին ովկիանոս շոգիներէն՝ որոնք միշտ
կը բարձրանան ու կը բարձրանան :

Խոտը՝ որուն վրայ նստեր ենք՝ անշարժ
գորդի մը պէս կ'երեւայ, ընդհակառակն կը
ծլի, կ'աճի, կը մեծնայ և գիշեր ցերեկ ան-
դադար ջրածնի և թթուածնի և ածխային
մասնիկներ մշտատեւ գործունէութեան մէջ
են իր ծոցը : Թռչունը լուռ կեցած է ան-
տառին մէջ, սակայն թռիս մօր տաքուկ
փետուրներուն ներքեւ հաւկիթները բարակ
բարակ կը թրթռան և ընդ հուպ ձաղուկ-
ները գուրս սլափ ելնեն : և մենք որ երա-
զացնոր կը գիտենք բնութեան այս մեծ տե-
սարանը, կը կարծենք թէ կը հանդէպինք և
հաւատալու հակամէտ եմք որ մեր քնոյն
ժամանակ բնութիւնը կը հանդէպ մեր մէջ .
կը սխալինք մեծապէս, սրտերնիս կը բա-
բախէ, իւրաքանչիւր բարախման ար-
եան շրջանը կը հրէ մեր երակաց վերջին
ծայրը, թոքերնիս գործողութեան մէջ է
անդադար վերածնունելու համար այդ կե-
նաց ծորանքը, մեր մարմնոյն ամեն մէկ
հազարորդամեղրը կազմող մասնիկներ զի-
րար կը մղեն, իրարու ճիշդ կը յարմարին,
կը զուգին, զիրար կը վանեն, անդադար
իրարու տեղ կը բռնեն : և եթէ մանրադէ-
տով կարենայինք ուսումնասիրել մեր գոր-
ծարանաց, մկանց, ջղերու հիւսքը, ար-
եան, և մանաւանդ ուղեղի իւրաքանչիւր
մասնիկի եռացումը, ներքին տեւողական

աշխատութեան մը հանդիսատես պիտի ըլլայինք, որն որ ցայլօք և ցերեկ կը թրթռանցնէ մեր էութեան ամեն մէկ կէտը, մեր յղացման վայրկենէն մինչեւ ցյեպին շունչներնիս — և անդրադոյն եւս, որովհետեւ հոգին թռուցեալ, մարմինը մասն առ մասն կը դառնայ, կը փոխուի երկրային բնութեան, տունկերու, կենդանեաց և մեզի յաջորդ ող մարդկանց. բան մը չկորսուիր, բան մը չի ստեղծուիր. մենք մեր նախահարց փոյլէն կազմուած եմք, մեր թոռներն ալ մերէնէն պիտի կազմուին:

Այս է էից և իրաց մշտնջենական յառաջադիմութիւնը. այս է լինելն յաւիտենից: Ահա համառօտիւք բովանդակեցինք աշխարհի մը պատմութիւնը: Ժամանակէ տեսակէտով արարածոց ընդհանուր երեւոյթը՝ ոչ նուազ տալուորութիւն կ'ընէ խորհող մարդկային մտաց վրայ, բան արաքսութեան տեսակէտով եղած դիտողութիւնը: Նրկու ըմբռնումներ փոփոխակի վերար կ'ամբողջացնեն՝ առաջնորդելով մեզ գնահատելու խորին իրականութիւնները այս ընդարձակ տիեզերաց, որուն յարակից մասն կը կազմենք:

ՔԱՄԻՆ ԶԼԱՄՄԱՐԻՈՆ

ՄԵՆԱՍՏԱՆԵ Ս. ՍՊԻՐԻՏՈՆԻ Ի ՀԱԼՔԻ

Արեգակն երբոր ի կոհակ հակի,
Սփռէ վերջալոյս շամանդաղս ոսկի,
Մահիկ լուսնեկն գողգոջ ու դրժգոյն
Իբր՝ ապաքինեալ կուսան նուաղուն
Յանաստող երկինս բարձրանայ լրուիկ
Եւ զմանրիկ ալեակս ներկէ արծաթիկ.
Երբ մէջ անտառաց քաղցրարոյր զեփուռ
Հրճծէ սիրաբար տերեւոց ի սփիւռ.
Երբ լուռ է բնութիւն՝ այնքը անշշունչ,
Օրն երբ նուաղի զերթ նուաղաց միմունջ.
Երբ ի վաստակոց դադարի մըշակ,
Եւ մանգաղն ի յուս դառնայ յիւր տընակ,
Եւ նաւաղն հեռուստ ի ծուփ կոհակին
Երազուն աչքը դիտելով զերկին
Մըրմնջէ՝ զաղօթս ի նաւ տարուբեր.
Այն պահուն՝ յորում մերձեայ գիշեր,
Եւ օր մեզ թողու իբրեւ յիշատակ
Մահամերձ նշոյլս յանհուն կապուտակ,
Ո՛հ, քաղցր քանի՜ է տրամայող սրտի
Կղզւոյ մ'ի կատար, ձեռն ի ծննտի
Դիտել ըզրնութիւն, պատկեր վեհափառ,
Մինչ ի հորիզոն կ'ընդգրկեն զիրար
Երկինք կապուտակ և ծղիւն այն անհուն:

Որ երբեւ վիշապ յետ ահեղ կրուդոյն
Ընկըղմեալ յանդորը ի քուն հանդարտի,
Երբ փայլ հեռուստ, զերթ ջինջ հայելի.
Յուլացնեն ի ծոցն ալեակք վէտ ի վէտ,
Յայն գեղազուարճ կղզեակս այգեւէտ,
Որք մշտադալար մայրեօք զարդարուն
Իբր յաւերժահարս, թուին ի ջրոյն
Համբարձեալ ի վեր գանգրահեր գլխիկ
Կարկառել միմանց ըզձեռս մըտերմիկ.
Մինչ մենաստանին զանգակաց հնչիւն
Խոր լուութեան մէջ հեռուն կորսուին.
Հո՛ւ՝ այն լերան ծայրն ուր գան մեռանիլ
Յեանագոյն ազմուէք աշխարհիս պատիր.
Ուր Աբարչին հետ՝ արարած միակ,
Հեռի ամբոխէն լալը խեղկատակ,
Հեռի մարդոցմէն՝ որք ըստեպ միայն
Սէր խնդրող սրտին գառնաղէտ թոյն տան.
Վըսեմ խորհրդօք հոգին ամփոփուած
Յերկինս սըլանայ, զերթ խունկ բուրվառաց.
Ո՛հ, յայնժամ չեկայ սիրտ մ'այնքան զաղիր
Որ անհունութեան առջեւ ծննդաղիր,
Չը տեսնէ Աստուած իւր գործոցն ի նուազ
Եւ մոռնալով զիւր կիւրքն ու տառապանք,
Չաղօթէ յայն սուրբ վայրըս ձեռնամանծ,
Չերթ կիսանուաղ ծաղիկ մի խնջած,
Ոյր ի ծոց կաթի ցօղն արշալուսայն,
Վեր բարձրացնէ զիւր գլխիկն անգոյն
Անարատ բուրումն ուղարկէ յերկին,
Գանէ՛ աղօթիւք տառապեալ հոգին
Սուրբ սպեղանին երկնային խնկոյ,
Որ ի վերայ իւր վերաց բազմահոծ
Յոյս անմահութեան հեղու համասարամ
Քանի՜ տենչայի է նորա յայնժամ,
Ի գազաթ լերանն այն ստուերամանծ,
Միայնակ ընդ բնութեան, ի խորս անտառաց,
Կեանքն ունենալով զերթ սին յիշատակ
Սպասել մահունս սրտով անապակ.
Եւ երբ յիւր աչաց միմէ լոյս օրուան,
Չերկնից գրբունս երբ հրեշտակք բանան
Ննջել յայն մայրեաց յատուեր զովազին,
Եւ մոռացութեան յանդուդ խաւարին
Ունենալ միայն զեփուռն միմունջ,
Որ տայ իւր ոսկերց համբոյր սիրամունջ
Եւ հրաշէկ այգուն մարդարտեայ արցունք
Գան միայն թրջել հողակոյտն անշունք:

Ե. Զ.

Վ Ե Պ

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Գ .

(Շարահանութիւն Տեա Թիւ 3734)

Նրեկոյին զիւղաբնակ միջանի բարեկամներ Վիլ Ֆէրնի կը ճաշէին, և կը յիշեմ որ ամբողջ Բարիկո ուշադրութիւնը դրսեւոր գայթակղական անցքի մը խօսքը դարձաւ: Նրխտասարդ կին մը, հարուստ և գեղեցիկ, ծննդեամբ Սէն Ժէրմէն արուարձանին առանէն աղնուազարմ ընտանեաց դասէն, իւր տարիաւորին հետ փախեր էր: Խաբուած ամուսնոյն կատաղութիւնը, ընտանեաց յուսահատութիւնը, իւր թշնամեաց յաղթանաւոր, ամեն բան մանրամասնօրէն կը պատմուէին: Ժամանակաւ կը ճանչնայինք այս երխտասարդ կինը. թէեւ չատոնց է որ չէինք տեսներ զնա, բայց այս ընտանեկան արկածը, թէեւ սովորական եւ ահաւոր, մեր վրայ անախորժ ապաւորութիւն մ'ըրաւ: Լ. Շարլօղի յանցանքը աւելի ծանրացնող կէտը՝ փոքրիկ զաւակ մը ունեցած ըլլալն էր, քանի մ'ամուսնան աղջիկ մը, որուն ժախտները անդունդին եզերքը զինքը կեցնելու էին: Հետեւաբար ամենքը կը դատապարտէին: Լուիզ ինքնին հաղիւ հազ կը համարձակէր զնա արդարացնելու պատճառներ գտնելու: Ես լուռ կը կենայի. ներքին պարտութեամբ կորակոր՝ ոչ ոք դատապարտելու քաջութիւնը կ'զգայի: Ամեն այդ զայրացեալ ձայները մտիկ կ'ընէի, և կը նախանձէի այդ կանանց խղճի հանդարտութիւնը, որով իրաւամբ կարող կ'ըլլային դատելու և դատապարտելու:

Տակաւ առ տակաւ խօսակցութեան նիւթը շեղեցաւ, ինչպէս որ միշտ կը պատահի նմանօրինակ պարագայից մէջ, և ամուսնութեան վրայ երկայն հակաճառութիւն մ'է սկսաւ. ոմանք յարանց՝ բնութեան հակառակ և դրեթէ բարոյականի դէմ օրէնսդրութիւն մը ըլլալը կը հաստատէին, որ մարդուս հողին կը պզտիկցնէր իւր ազատութիւնը սեղմելով: Անայր և Լուիզ մա-

նաւանդ եռանդեամբ հակառակը կը ջատնագովէին: Ամեն տեսակ սովորական և հասարակ դարձած առարկութիւնք երկուստեք տեղի ունեցան. — Ճշմարտապէս արժանաւայելը՝ փոխադարձաբար իրարու յառեալ ու սրտի մոռք զիրար սիրող էակաց ազատամտութեամբը կրնայ ըլլալ, կ'ըսէին ոմանք, իսկ այդ դժնեայ և անհամ ամուսինները՝ բռնի համակամեալ, որոնք յաճախ փախուստ կուտան օրինաց իրենց վրայ դըրած պարտականութենէն, ո'չ արժանի են և ո'չ ալ կրնան յարգանք աղդել. ծաղրալի են և ոչ այլ ինչ:

— Ինչ, դոչեց Լուիզ բարձրաձայն, այդ միշտ ցիւեանս յաւիտենականաբար զիրար սիրելու յանդուգն խոստման մէջ փսեմութիւն մը չէ՞ք տեսներ, և ոչ ալ այդ անդարձ եւ առաջ ետեւ չմտածելով եղած անձնուիրութեան մէջ. աւելի աղնուական և յարգանաց արժանի չէ՞ միթէ այս՝ քան այդ բծուն խոհեմութիւնը որ կը հաշուէ կը կշռէ անհաւատարմութենէ առաջ գալիք պատահումները:

— Սիրուն աղջիկս, ժպտելով կը պատասխանէր Մ. տը Շէրվիէր, մեր դրացիներէն մին, ո'վ կրնայ երաշխաւորել թէ միշտ անփոփոխ պիտի մնայ: Կը նմանի անոր որ մէկը ելնէ երդուըննայ թէ երբէք չպիտի ծերանայ:

— Վալլ Տէր, դու ի՞նչպէս կը մտածես, յանկարծ հարցուց Պրիար դքսուհին:

Բողէր մինչեւ այն ժամանակ խօսակցութեան մէջ մտած չէր. հարցմունքը իրեն ուղղուելու տեսնելով թունդ ելաւ և մինչեւ մէկ աստիճան յուզմամբ՝ իւր պատասխանին սպասեցի:

Վայրիկ մի տատամսելէ ետք՝ կարծեմ թէ ըսաւ. «Այս աշխարհիս մէջ մեծ և ճշմարիտ ըլլալով՝ սէրը միայն կայ: Նրջանիկ անոնք որ սրտերնուն սիրածին հետ կը զուգաւորին մարդկային ընկերութեան առջին. երկնային երազ մ'է այդ իրականացեալ, բայց երջանիկ նաեւ անոնք որ ամեն արդէլքի, հակասութեանց և բարոյականի երեւակայական օրինաց հակառակ՝ դիտեն սիրել. ճշմարտութիւնը սիրելն է, մնացածը լոկ պատշաճողութիւն է:» — Եւ կնոջը դառնալով. — միթէ զքեզ նուա՞ղ պիտի սիրէի այդ մատաղ հասակիդ մէջ, նուա՞ղ պիտի յար-

գէլի եթէ ընտանիք, պատիւ և հանգիստդ ինձի համար զոհած ըլլայիր. եթէ ամենէն դատապարտեալ՝ կոյր վստահութեամբ եւ հաստատամտութեամբ, զրկացս մէջ նետած ըլլայիր ինքզինքդ՝ միթէ ինձ նուազ սիրելի պիտի ըլլայիր:

— Սիրելի Բոպէրս, ըսաւ խնդալով հօրեղբայրս, ահաւասիկ այնպիսի բարոյականի սկզբունքներ որ քեզի խրատ չեմ տար որդւոյդ հաղորդես:

— Իմ որդիքս իրենք իրենց պիտի գըտնեն զայնս, տարակոյս մի ունենաք, թէ եւ ալ եւոր հասակիս խնամտութիւնը ուրիշ լեզու մը գործածէ. եթէ պարզասիրտ են, ինձ պէս պիտի մտածեն...

— Եթէ պարզ են, գոչեցի յակամայից բռնադատեալ, եթէ ունին քաջութիւն իրենց վրայ անդրադառնալու և իրենց շուրջը նայելու, շուտով պիտի հասկնան որ սէրը կենաց երազն է՝ եթէ չէ մշտնջենական պատրանք: Եւ եթէ օր մը ինձի տրուած ըլլար առաջնորդել որդւոյդ, Բոպէր, ես իրենց պիտի ըսէի. Մի հաւատաք սիրոյ բայց հաւատացնել տուէք ուրիշներուն, սրտերնիդ մի՛ տաք, և չըլլայ որ մոռնաք այդ խաբուսիկ խօսքեր որով անկեղծ և պարզ հոգի մը յուսով պարարեցիք. ուրիշներն ալ նոյն որոգայթը պիտի կրնան. ետեւնիդ դառնալ նայելու ժամանակ մի՛ կորսնցնէք, անխիղճ՝ ձեր կրից մշտնջենական կատակերդութիւնը խաղացէք. իրիկուան երգումնիդ՝ այսօր ալ ըրէք: Անցեալէն միմիայն ձեր յաղթութեանց յիշատակը պահեցէք. վա՛յ անոր որ արտասուօք կամ կենօք կը վճարէ զայնս:

— Ո՛հ, ի՛նչ ճարտասանութիւն, ըսաւ հօրեղբայրս ծիծաղելով:

— Սիրելիս, ըսաւ Տիկին Շէրվիէր, քու պատճառաբանութիւնդ նոր չէ. ամեն հասարակ վիպասանութեանց մէջ տեսնուած բանն է և շիտակը ըսելով՝ քոյդ նման վարդափթիթ չրթանց համար անտեղի և նորաձեւութեան հրապույրքն ալ չունի:

— Ե՛հ օրիորդ, ըսաւ Շէրվիէր կանանց հաճելի ըլլալու եղանակաւ, թող մեզ որ պեղք ապահովցնենք թէ կայ սէր, հաւատայ՝ մեր խօսքին և սպասէ՛ որ ուրիշ մը աւելի երջանիկ՝ քեզի ապացուցանէ զայն փորձով: Գու նոր մարդատեցութիւնդ մեր

նոր փորձառութեան հակառակը պնդելու իրաւունք չունի:

— Տէ՛ր Աստուած, ըսի ես անձկանօք, իմ ուղածս ալ այն է՝ որ ձեզի կարենամ հաւատալ, բայց նայեցէք ձեր շուրջը. Ո՛վ է սիրել զիացողը. Լ. Շարլօտն է միթէ... օրինակի համար. բայց զո՞վ է որ կը սիրէ, իւր ամուսինը թէ տարիածուն. պատասխան չտուած թողէք որ տարի մ'անցնի, նուազ իսկ թերեւս: Եւ դո՛ւք, տեարք, կը պահարակէք ամուսնութիւնը և կեանքը շատ երկայն կը գտնէք՝ մէկ սիրով մը միայն լեցնելու համար զայն. ես փորձառութիւն չունիմ կ'ըսէք, այնպէս ըլլայ, բայց շուրջս նայեցայ, մտիկ ըրի, հասկցայ: Այս իմ յանցանքս է. միթէ սիրել չգիտնալնուդ՝ համար զձեզ կ'ամբաստանեմ: Միայն թէ կը ցաւիմ ձեր վրայ: Աշխարհս ծերացած է արդէն և ամեն բան մաշած գործածուած. ահա ձեր կը ծնանինք և ամեն բան սպառած կը գտնենք: Այլ և այլ իրաց անուանք միայն կան՝ տխուր ժառանգութիւն. սիրոյ վրայ կը խօսին, բայց ոչ ոք կը սիրէ:

— Ե՞ս ալ, հարցուց մեղմիւ Լուիլ:

Դող ելայ, զնա մոռցեր էի:

— Դո՛ւ, այո՛, դու միայն, պատասխանեցի համառօտ լուծեմէ մը ետքը, և դահլիճէն դուրս ելայ՝ հօրեղբօրս ինձի թոյլ տրուած ազատախօսութեամբս դայթակղեցնելով զամենքը:

Գնացի գէպ ուղիղ պատշգամբին վանդակապատին. հոն արմուկս կ'սթնցուցած, ձեռն ի ծնօտի, արտասուաց գետն իջուցի: Օդը ծանր էր հով ամենեւին չիկար. ծաղկըները օրուան տաքութենէն նուաղեալ՝ բարկ անուշահոտութիւն մը կը բուրէին, միրիկի դուշակ մղձուկ տաղնապ մը բոլոր բնութեան վրայ կը ծանրանար: Նրկինք, ուսկից աչքըներս ընդ վայր արիութիւն կը հայցէին, մթնորակ էին և մերթ ընդ մերթ ըլին փայլակ մը՝ յամրաշարժ լեռնակունտակ ամպոց մէջէն լուսաւոր գլիմ մը կը ձգէր. պատշգամբին մէկ անկիւնը բազմոցի մը վրայ երկնցայ մնացի:

— Սիրելի ուրանալ սէրը՝ հայհոյել է, Մատթէն, ինձ ըսաւ Քէպլը որ ես չտեսած ինձի մօտեցեր էր, և եկաւ քովս նստաւ: Մտածեցի՞ր արդեօք թէ այն անձը... որուն վրայօք ինձի խօսեցար... զոր դու

կը սիրեա, ո՛րչափ պիտի վշտանար եթէ քիչ մը առաջ լսելու ըլլար իւր հաւատարմութիւնը ի դերեւ հանելու և սրտիդ պաշտածը այրեացաւեր մատնելու :

— Շատ հոգ կը տանիք իրեն համար . ապահով եղէք, պատասխանեցի իրեն , իմ սիրածս ինձ համար անհանդիստ չըլլար բռնաւ , կ'երգնում քեզ , երջանիկ է ու զիս կը մոռնայ :

— Ուրեմն միշտ կը սիրէ՞ք զինքը , ըսաւ ցած ձայնով մը :

— Այլ սիրե՛մ զինքը , դռեցի յուսահատութեամբ , ահա՞ կը մեռնիմ . . . չէ՛ք տեսներ ուրեմն , ո՛չ որ կը տեսնէ , ո՛չ որ կը հասկնայ . . . ա՛հ ո՛ւր էր թէ ոտքիս տակը կոխած փողոյ հատ մը , հիւլէ մ'ըլլայի . . .

— Մա՛տէն , քու տարիքիդ մէջ մահուան վրայ պէտք չէ՛ խօսիլ :

— Այո՛ , ճշմարիտ է , ըսի դառնութեամբ , խնդալու է , այնպէս չէ՛ , և երջանիկները պէտք չէ վրդովել . . . ի՛նչ ըրած եմ ես այսչափ տանջուելու համար . . . բայց հանգստեան օրն ալ պիտի դայ , այո՛ , քիչ տեսնէն , կ'իդամ դայդ . . . թերեւս այն ժամանակ պիտի հասկնաք , Բո՛ւպէր , այս տարիքին մէջ ի՛նչ բանէ կը մեռնին . . . :

Ինքզինքս կորուսած , իմ վրաս սեւեռած նայուածքին առջեւ սառած մնացի , և վազեցի սենեակս մօտայ : Ի՛նչ ըրի , ըսի ինքնիրենս , ծնկան վրայ իյնալով ամօթահար , արդեօք ինքզինքս մատնեցի . ա՛յդ աստիճան նուաստութեան հասայ . . . ա՛հ , այդ նայուածքը զիս կ'այրէ , ա՛հ , բոլոր արիւնովս եթէ կարենայի զայդ քնջել , խեղճ սիրտ՝ անձնատուր ես եղեր . . . ապա ուրեմն՝ պէտք է վախճիլ , մեկնիլ անպատճառ , չեմ ուզեր կրկին այդ աչաց պստաւհիլ . . . չեմ ուզեր իր առջեւ կարմրնալ :

Վայրիկ մը մտածեցի , յետոյ յանկարծակիս որոշողութիւն մ'ընելով , ոտք ելայ և անմիջապէս Տօքթ. Պրիւնոյին զոր մանկութենէս ի վեր կը ճանչնայի և զիս հօր պէս կը սիրէր , դրեցի « Քեզ պէտք ունիմ , ե՛կ » : Տոմարկս զրկելուս պէս՝ աւելի հանգըստութիւն մը իմացայ : Պառկեցայ , անխախտ միաբն դնելով մէկ քանի օր անկողնէն չեմ չեմ մինչեւ որ ինչ ընթացք բռնելս չկարգադրեմ :

Նրկորդ առաւօտ կանուխ բժիշկը ե-

կաւ . զիս տեսածին պէս ընկրկեցաւ :

— Այլ տեսնե՞ս , ըսի ձեռքս իրեն երկընցնելով , այս ընթացքով դերեզման պիտի իջնեմ :

— Պատճառը ի՛նչ է , ըսաւ զիս քովը նստեցնելով . այս աստիճան փոփոխութիւն անհաւատալի է . խոստովանէ անյապաղ թէ մեծ անխոհեմութիւն մը ըրած պիտի ըլլաս կամ թէ ծանր ցաւ մը ինչ՝ կը ծածկես . . . ճշմարիտը ըսէ ինձ , ազնիւ աղջիկս . . . :

— Ո՛չինչ , տօքթէօր , ո՛չինչ :

Գլուխը շարժելով ինձ կը նայէր , միանգամայն մատուրներով՝ երակներուս ընդոստ յիմարական զարնուածքը կը համբէր :

— Է՛հ , տօքթէօր , ըսի իրեն յանկարծ , եթէ կամիս՝ կրնաս զիս փրկել . քեռէ միայն կախում ունի . . . բա՛ն մը արտասանէ և Մատէնդ վերստին կ'ստանայ առողջութիւնը :

— Տեսնենք , ի՛նչ է . . . խեղդութիւն մը :

— Այո՛ , խեղդութիւն մը , բայց խեղդութիւն մը անվնաս տեսակէն , որ մէկու մը վնասակար չէ , ընդհակառակն . . . կ'ուզէի ճամբորդութիւն ընել . . . մի՛ խնդար , տօքթէօր , ըսածս ճշմարտութիւնն է : Տաղտկութենէ կը մեռնիմ . . . ցայդ և ցերեկ կը հալիմ կը մտնիմ . տաղսուկ մը որ կապարի պէս ծանր կը կռէ սրտիս վրայ . կը տեսնես , դու այդ հիւանդութիւնը չես ճանչնար :

— Այո՛ այո՛ , այդ հիւանդութիւնը անխորժ անուն մ'ունի , իմ խեղճ Մատէնար :

— Ա՛հ , հիւանդութիւնը անունէն աւելի անախորժ է , հաւատայ ինձ , տօքթէօր . եթէ ինձի բարեկամ ես , պիտի համալես հօրեղ . բայրս զիս առնուլ տանիլ , ուր որ ըլլայ անտարբեր եմ , Սպանիա , Իտալիա , Ճենաստան եթէ կ'ուզես , բաւական է որ հեռու տեղ մը ըլլայ :

— Շատ աղէկ , շատ աղէկ , անկարելի բան մը չէ և միջոցն ալ շատ ընտիր :

— Այո՛ , տօքթէօր , բայց անմիջապէս պէտք է որ ըլլայ . չորս օր այլ եւս՝ չեմ ուզեր հոս մնալ , անկից առաջ կը մեռնիմ :

— Հրաբուխի պէս կը սրտթկաս , աղջիկս , և ինչո՞ւ համար այս դործը հօրեղբորդ հետ ինքնին չես կարգադրեր . քեզի բան մը չի կրնար ժխտել :

— Ա՛հ , բարի և ազնիւ բարեկամս , պէտք

է նաեւ համոզել հօրեղբայրս որ այս ճանապարհորդութիւնը ինձ համար անհրաժեշտ, Լուիզին՝ ապետաբեր կրնայ ըլլալ:

— Ահ, ո՛չ, այս բանս չեմ կրնար ըսել. Լուիզ թարմ վարդակարմիր արուսեկին կը նմանի և բան մը չունի: Ուրիշ կողմանէ լաւ կը ճանչեմ, ոչինչ կրնայ արդեւուզ զինքը որ զքեզ թողու առանձին երթաս՝ այդ հիւանդոտ փնձակիդ մէջ:

— Ահա այդ էր իմ վախս ալ, գոչեցի յուսահատ, ասպա ուրեմն հրաժարինք. այս դիտաւորութենէն: Միեւնոյն բանն է, միշտ մը հոս և ժամ առաջ վերջերնիս հասնի:

— Բայց ազլիկա . . . :

— Տօբթէօր, ըսի ճիշդ մ'ընելով, ինչ որ կ'ուզես մտքէդ անցուր ինձի համար, չար սիրտ մ'եմ, ապերախտ մ'եմ, դեռ ինչ գիտնամ, բայց որովհետեւ վերջապէս պէտք է խոստովանիլ, Լուիզն է, իմ քոյրս որուն ներկայութիւնը զիս կը մեռցնէ: Իմ թշուառութեանս չափը. չէք գիտեր, մտքերնէդ անգամ չ'անցնիր, այնպէս չէ՞: Ահ շատ հիւանդ եմ, տօբթէօն, այո՛ Լուիզը, իմ սիրական. Լուիզս, որ ա՛յնչափ կը սիրէի, ա՛լ չեմ կրնար տեսնել զինքը . . . :

— Մատչէն, ի՞նչ կըսես. միթէ փոխուեցա՞ւ քեզի համար:

— Ընդհակառակն աւելի դուրգուրացող վրաս, շատ աւելի կատարեալ . . . դժպտնի կ'երեւամ. քեզ՝ այնպէս չէ՞. եթէ գիտէիր այս ատելի հիւանդութիւնը ինձ ո՛րչափ ցաւ և վիշտ ազդեց՝ վրաս կը գլխաւոր . . . : Զիս ճանաչող դիր, առողջացած պիտի վերադառնամ՝ առ ձեզ. քու առջի Մատչէնդ, զայն որ կը սիրէիր, զոր ամենքը կը սիրէին, պիտի տեսնէք . . . :

— Արդէն կ'ուշայի ես. ջանաց՝ զիս հանդարտեցնել, և գնաց հօրեղբօրս հետ տեսնուելու: Զգիտեմ ինչ ըսաւ իրեն, ի՛նչ ըսաւ Լուիզին. բայց նոյն երեկոյին հօրեղբայրս ինձի աւետիս տուաւ որ մէկ երկու օրէն երկուքնիս միասին պիտի մեկնէինք դէպի Իտալիա:

(Շարունակէի)

ԲՕԼ ԱԼՊԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

ՇԱՐԱՐԱԿԱՆ ԼՐՈՑ

7-14 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անցեալ շաբթու հեռագիրն համառօտիւ ծանոյց երից կայսերաց տեսակցութիւնն ի Աբիէրնիվիձէ:

Վիլհէլմ կայսրը սեպտ. 14 ի երեկոյին Աբիէրնիվիձէ երթալու համար Պէրլինէ մեկնեցաւ ընկերակցութեամբ Պիզմարք իշխանին: Սեպտ. 15 ին Ալէքսանդր Գ. կայսրն իւր ընտանեաց հետ հասաւ տեսակցութեան որդեակ վայրն. նոյն օր անդ ժամանեց նաեւ Աւստրիոյ կայսրը, Քալնոքի կոմսին հետ: Ալէքսանդր կայսրն, աւստրիական համագլխատով և ընկերակցութեամբ կայսրուհւոյն, ողջունեց Ֆրանձ Յօզէֆ կայսրն, որոյ համագլխատն և պատուանշանքն ուստական էին: Նրկու՝ վեհապետը մի քանի անգամ ողջագուրեցին զիրար: Նրկու ժամ յետոյ հասաւ Վիլհէլմ կայսրն, որոյ ընդ առաջ գնաց Ալէքսանդր կայսրն: Նրկու՝ վեհապետը երիցս ողջագուրեցին զիրար. Ալէքսանդր կայսրը մասնաւորապէս սիրալիր ընդունելութիւն ըրաւ Պիզմարք իշխանին. ասպա երեք վեհապետը կայսերական դղեակը գնացին որ փառաւոր ճաշ մը տրուեցաւ: Սեպտ. 16 ի առաւօտուն առանձնակի զօրահանդէս մը կատարեցաւ. երեք կայսրը ռուսական զինուորային համագլխատ կը կըրէին և իւրաքանչիւրը մէկ մէկ վաշտի գըլուխ կեցած միմիանց առջեւէ անցան ողջունելով զիրար: Այս տեսարան՝ որ երից կայսերաց մոտերութիւնը ցոյց կուտար, աննըկարագրելի խանդ մը յառաջ բերաւ ըսպայից և զինուորաց քով:

Ապա երեք կայսրը նախաճաշեցին և որսի գնացին: Սոյն միջոցին, Պիզմարք իշխանը, Պ. Ալրա և Քալնոքի կոմսն առանձին տեսակցութիւն մ'ունեցան, ուր կը կարծուի թէ վերջնական որոշումներ տրուեր են երից վեհապետաց բարեկամութիւնը վերահաստատելու և Ներոպիոյ խաղաղութիւնը պահպանելու մասին: Սեպտ. 17ին կայսրը բաժնուեցան: Վիլհէլմ կայսրը, դէպի կա-

յարան գնացած միջոցին, թեւեւ տուած էր Ռուսիոյ կայսրուհւոյն՝ որոյ երկու երեսներն համբուրեց : Յրանձ Յօգէֆ կայսրը սիրալիր կերպիւ հրաժեշտ տուաւ Պիլզնայի իշխանին : Նախ Վիլնէյի կայսեր կառավարման ճամբայ ելաւ, ապա Յրանձ Յօգէֆ կայսեր կառավարման : Երեք կայսերը նորէն ողջագուրեցին զիրար և Ալեքսանդր կայսրը շնորհակալութիւն յայտնեց իւր օգոստոսական հիւրերուն այցելութեան համար :

Գերմանական կէս-պաշտօնական թերթ մը, որ շատ անգամ կը յայտնէ կառավարութեան ճամբարի խորհուրդներն, կը յայտարարէ թէ՛ Սքիէրնիվիձէի մէջ Վեհապետը զբաղած են «Եւրոպական արեւելից փնտրելիք և Եւրոպիոյ մէջ հանրային բարեկարգութեան պահպանման խնդրով» այսինքն՝ պարզօրէն խօսելով, որոշումներ տուած են համագործակցի յեղափոխական շարժմանց վերայ, և երկից կայսրութեանց աշխարհավարութեան մէջ համամտութիւն մը յառաջ բերած են Պալքանեան թերակողմից գործող նկատմամբ :

— Նուապար փաշա ծանոյց Եգիպտոսի «Հանրային Պարտուց Սնտուկին» Համագործակցի Յանձնաժողովոյն թէ՛ եգիպտական պարտուց գլխամասին (աֆրիկական) վճարումն երկուսական նախարարութեան կողմէ դադարեցուցուած է, մինչեւ որ հնար լինի վճարել առաջիկայ կտրոններն : Անգլիայէն և Իտալիայէն զատ, եգիպտական պարտուց վճարման մէջ շահ ունեցող եւրոպական տէրութիւնք, գլխաւորապէս Ֆրանսա, բողոքեցին եգիպտական կառավարութեան այս որոշման դէմ, զոր կը նկատեն բռնաբարութիւն մը եգիպտական պարտուց յարդարման (լեֆթաֆէն) ի հաշակաւոր օրէնքին :

— Խարդումէ՛ նորէն լուր եկած է Սուաքիմ, թէ՛ զօրավար Վորտոն յաջողեր է երկու վճռական յաղթանակներ տանել ապրստամբաց վրայ, որք հետեւապէս պարտաւորուեր են բառնալ Խարդումի պաշարումն :

— Տէպա լրագիրը Վիլնէյայէ ստանալով կը հրատարակէ սա հեռագիրը՝ «Զրոյց կը տարածուի աստ թէ՛ իւր կարճատեւ գիւղագնացութեան միջոցին, Պ. Ժիւլ Ֆէրրի արագապէս անցեր է գերմանական հողն, և մինչեւ Ֆրիէտրիխսրոհէ երթալով, տեսակցութիւն մ'ունեցեր է Պիլզնայի իշխանին հետ» :

— Կ'երեւի թէ Ռուսիա կ'ուզէ Ֆրանքօ-չինական պատերազմէն օգուտ քաղել նորէն չինական հողէն մաս մը կորզելով : Ռուսական նաւատորմը մեծ պատրաստութեամբ ճամբայ ելած է Չիֆուէ և անձանօթ տեղ մը գնացած է Խաղաղական Ուկրաինոսի չինական եղերայ վրայ :

— Բարիդէ սեպտ. 24 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բո-Չէ-Լիի փոխարքայ Լի-Հունկ-Շանկ վերահաստատուեր է իւր Պաշտօնին մէջ :

— Սեպտ. 24ին Մարսիլիոյ մէջ քուերայէ մեռան 4 հոգի, Թուլօնի մէջ 1 հոգի, ի Նարուի 126 հոգի, և Իտալիոյ զանազան կողմերը 87 հոգի, ընդ ամենը մէկ օրուան մէջ 215 հոգի :

— Ռուսի Բո-բէէ կը գրէ. Պալքիկ ծովը Կասպից ծովուն հետ կապելու գաղափարը, զոր Մեծն Պետրոս յղացած էր, այժմ կատարուած կրնայ համարուի : Այս միջոցին ի Բեդրսպուրկ կը պարպուի մեծ նաւ մը, որ Բագուէ (Կասպից ծով) քարիւղ բեռցած էր յուկրին, և ուղղակի նաւարկելով գետերու ճամբով, մանաւանդ Վոլկա գետով, Բեդրսպուրկ հասած է օգոստոսին, այսինքն՝ 5 շաբաթէն : Ռուսիոյ պատերազմային նախարարութիւնը կը խորհի նաւարկութեան այս ճամբէն օգուտ քաղել զինուորական և ծովային պիտոյից համար :

— Քառու լրագրին մէջ կը կարդանք՝ «Տիգրիսի նորակառոյց Քաղաքատան աշտարակին վրայ պիտի դրուի մեծ ժամացոյց մը, որ հաշակաւոր է իւր հնչմամբ : Պատմական բան մ'է այս գանդակ : Դար մը առաջ Կարնոյ կուսակալը Լէյպիկէ բերել տալով զայն, դրած էր քաղաքին Թէփիս-Մինարէ կոչուած մզկիթին վրայ, ուստից գանդակին ձայնը կը հասնէր Կարնոյ բոլոր շրջակայ գիւղերն : 1829ի պատերազմին Բաքուից զօրավարը Կարինէ Տիգրիս փոխադրեց զայն» :

— Ֆրանսական կառավարութիւնն հրաման տուած է որ Թունուզ գտնուող զօրաբաժնէն 5,500 զինուորը Ֆրանսա վերադառնան : Այս կերպիւ 2-3 գունդ զօրք միայն պիտի մնան պաշտպանելու համար երկիր մը որ Ֆրանսայի 15-16 նահանգաց ընդարձակութիւնն ունի : Այս տնօրինութիւն ցոյց կուտայ թէ Ֆրանսական իշխանութիւնն ո'չ եւս երկիւղ ունի Թունուզի կողմէ :

— Ամերիկեան Բեռլինի Լաբէր անուն թերթը սա հատուածը կը հրատարակէ հայ վաճառականի մը վրայ. «Պ. Պողոս Գուրեան, որ Թուրքիայէն Ամերիկա կը բերէ չքանուած մետաքս, նախորդ ամսոյ 28ին Արեւելեան շողեռաւոր զնաց Թուրքիա, իւր հայրենի երկիր. Պ. Գուրեան, Ամերիկայի մէջ հաստատուելէն ի վեր, յաջողութիւն ձեռք բերաւ Պրուսայի մետաքսներուն աստ ներմուծման առեւտրոյն մէջ, և մեծ մասամբ ինք եղաւ շարժառիթ այն բարեօրման որ տեղի ունեցաւ Թուրքիայէն ի Միաց. Նահանգս բերուած մետաքսներու տեսակին մէջ : Պ. Գուրեան, որ կարճ ժամանակ կի մը համար Թուրքիա կը վերադառնայ, հոն միջոցներ ձեռք ախտի առնու. Ամերիկա զրկուելէք մետաքսներուն ևս առաւել բարելորման համար : »

— Պուլկարիոյ Ալեքսանդր իշխանն, ընկերակցութեամբ բարձրաստիճան պաշտօնակալաց, ամսոյս 4/16 ին Վառնայէ մեկնած և Պուքրէշ հասած է, և հետեւեալ օրը Սինայիա գնացած է, Ռումանիոյ Կարոլ թագաւորին ամարանոցը, տեսակցելու Ն. Վեհափառութեան հետ : Պալքանեան փոքրիկ իշխանաց ու վեհապետաց այս սերտ մտերմութիւն ուշադրութիւն կը գրաւէ Եւրոպիոյ մէջ :

— Կը հաստատուի այն լուր թէ Լոնտոնի գերմանական դեսպան Միւնսդէր կոմսն հըրաժարական տալ պարտաւորուեր է : Պիզմարք իշխանը կը յանգիմանէ Միւնսդէր կոմսը՝ Լոնտոնի Դեսպանախորհրդին մէջ Լորտ Կրանվիլի նկատմամբ չափազանց մեղմ ընթացք մը բռնելուն համար :

— Բեդրսպուրկէ Լոնտոնի լրագրաց ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սեւաստափոլի նաւարանք կ'ընդարձակուին, որուն համար գիշեր և ցորեկ կ'աշխատուի, և ռուս կառավարութիւնն հրաման տուած է քանի մը զրահաւորաց և բազմաթիւ ծովաւորակիր շոգ եռաւուց անցապաղ շինութեան, և փոխադրման ի Սեւ ծով :

— Շքոտրայէ լուր կը տրուի Վիենայի լըրագրաց թէ Քասդրադիի, Հոգդիի, Թուզիի և Բալադիի ալպանիական ցեղերուն մէջ ընակեալ Օսմ. պահապան զօրքերը փոփոխել հարկաւոր դատուած է : Կ. Պոլիսէ զրկուած են 200 զինուորք, 6 Գրուբի թնդանօթք և ռազմավթերք : Անգլի-

ացի հեղինակուհի մը, Օր. Ռէյզսդըր, ժամանակէ մը հետէ կը գտնուի Շքոտրա : Երկիրը կը քննէ, Ալպանիոյ վրայ գիրք մը գրելու դիտաւորութեամբ :

— Տոնկուայի կառավարչին մէկ հեռագրոյն նայելով, օգոստոս 30 ին Կորտոն վաշա վճռական յաղթութիւն տարեր է Մէհտիի մարդոց վրայ, յաղթութիւն՝ որոյ շնորհիւ վերցեր է Խարդուլի պաշարումը :

Ն Ե Ր Ք Ի Ն

Ամսոյս 10 ին երկուշաբթի երեկոյ 9էյթուհի մէջ մեծ հրդեհ մը պատահելով, ամբողջ շուկայն և 400 տուներ հրոյ ճարակ եղեր են :

— Օգոստոսիա Սուլթանն հանգուցեալ Կիրիտի Մուսթաֆա փաշայի Էմիրիէնի ծովեղերեայ գեղեցիկ ապարանքը Գարատաղի իշխանին նուիրեց :

— Գերմանիոյ ծովային սպայներէն ըՍդրախ հաղարապետն, որ օսմանեան ծովային նախարարութեան մէջ կարեւոր պաշտօն մը ստանձնած է, մայրաքաղաքս եկաւ :

— Բէթիի վարչութիւնն յառաջիկայ տարւոյ ծխախոտի մշակութեան համար հարկ եղած հրահանգներն հաղորդելով գաւառական գործակալաց, արտօնութիւն տուած է ի հարկին փոխատուութիւն ընել երկրագործաց :

— Էնկիւրիի գաւառին կաւի փուռերու վարձակալութիւնն 3 տարուան պայմանաժամով յանձնուած է Ալիւան պէյ անուն անձի մը, տարեկան 753,000 զրուշի փոխարէն :

— Բեդրսպուրկի Անգլիական դեսպան Ալը Էտուարտ Թօրնթօն Կ. Պոլսոյ Անգլիական դեսպան կարգուեր է Լորտ Տըֆրիէնի տեղ :

— Գերմանական դեսպան Պ. Բատովիճ Իզմիր գնացած է, Պէրկամայի կողմերը կատարուած հնախուճական քննութիւններն աչքէ անցնելու և ապա Եփեսոսի աւերակներն այցելելու համար :

— Մէնթէշի նախորդ կառավարիչ Մուսթաֆա փաշա երկուշաբթի մայրաքաղաքս եկաւ, և ուղղակի կայսերական պալատն երթալով, Օգոստոսիա Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ :

— Սղամսուրը՝ մայրաքաղաքս հասած մասնաւոր հեռագրերէ կը տեղեկանայ թէ Գաւառաւորի մէջ քօլէրա ծագեր է, իսկ Թէր-ճիմանը Հազիգաթ կը հերքէ այս, ինչպէս նաեւ Ալլանիոյ կողմերը քօլէրա ծագած լինելու գրոյցներն ։

— Ալլանիոյ գինն իջած լինելուն պատճառաւ, հացի գինն 3 փարա զեղչուած է ։ Հետեւաբար հացադործաց հացին օխան 40, իսկ սխիթճիներունը 30 փարա որոշուած է Պոլսոյ քաղաքապետութեան հրամանաւ ։

— Միացեալ Նահանգաց հանրապետութիւնն 3 սնտուկ ընտիր գրեանք և զանազան քարտէսներ նուէր զրկած է, որը կըրթական պաշտօնատան յանձնուեցան շաք-թուս սկիզբը ։ Սնտուկներուն մէկը՝ կայսերական պալատը զրկուեցաւ, մի քանին՝ օսմանեան մատենադարանն, իսկ միացեալ օսմանեան թանգարանին, բժշկական վարժարանին և Դիտարանին, Բօլքեր Գօլթի յատկացեալ են ։

— Թղթատարական վարչութիւնը կը ծանուցանէ թէ թղթատարական ուղղակի հաղորդակցութիւն հաստատուած է Վերատիւ և Գարա-Հիսարը Շարդի միջեւ ։

— Աւստրո-Հունգարիոյ աւագաժողովոյ անգամներէն կոմս Լանսֆօրտնքի՝ Գօնեայի կողմերը գնացեր է հնախուզութեան համար ։

— Մարսիլիոյ մեծահարուստ Յոյն սեղանաւոր Պ. Զաֆիրօթուօ, որ Պօլիս եկած էր, 100 հազար Ֆրանկ նուիրած է մայրաքաղաքիս յունական վարժարանայ, բարեգործական հաստատութեանց և Պոլսոյ օսմանեան Որբանոցին ։

— Օսմանեան արժէթղթոց միացման եւ հին արժէթղթոց փոփոխման գործը պիտի սկսի յառաջիկայ դեկտ. 3/13 ին ։

— Պոսնիոյ մէջ Թուրքերէն լեզուաթերթ մը սկսած է հրատարակուիլ Վաթան անուամբ ։

— Թուրքո-Ռուսական առեւտրական նոր դաշնագիրը կնքուելու մօտ է ։ Արդէն համաձայնութիւն գոյացած է բոլոր ապրանց սակագնոց վրայ, ի բաց առեւալ երկու ապրանքներ. բայց այս վերջին կէտն ալ կարգադրուելու վրայ է ։

— Կարնոյ Ռուսական հիւպատոսը մայրաքաղաքս եկած է ։

— Կայսերական հրամանաւ Պաղատի կուսակալը պիտի վարէ Պարսպի կուսակալութեան պաշտօնն ալ, մինչեւ ցընարութիւն կուսակալին Պարսպի ։

— Նահանգաց համար կարգեալ քննչաց ամսաթուղակը առհասարակ 6000 ական շրշ են ։

— Նախորդ թուով ծանուցինք թէ Բ. Դուռն եօթն բժիշկ որոշած է առողջապահական խորհրդոյ նշատերու մասնակցելու համար ։ Նորընտիր անդամք երեքսթի օրը թէեւ գնացեր են յիշեալ պաշտօնատունը և ուզեր են ներկայ գտնուիլ նախն, սակայն խորհրդոյ օտարազգի պատուիրակք միահամուռ յայտարարելով թէ նոր անդամաց մասնակցութիւնը չեն ընդունիր, այս խնամով դիտողագիր մը ստորագրեր ու մեկներ են ։

— Կը յիշուի թէ Մօնիթէօն Օրիանթալ անկո-Ֆրանսական թերթն հնգամեայ դադարման դատապարտեցաւ, Տէրքօսի կողմերն համաձայն հիւանդութիւն մը ծագած լինելու անհիմն գրոյցն հրատարակած լինելուն պատճառաւ ։ Տէրքօսի ջրի ընկերութեան տնօրէն Թէրնօ պէյ նախկին գրելով առ թարիք, յայտնած էր թէ Մօնիթէօն 400 ռակի պահանջած է, սպառնալով չարունակ ընկերութեան դէմ դրել, եթէ չարուի պահանջած դուռնարը ։ Այժմ Մօնիթէօնի տնօրէն Պ. Պէլիս դատ բացած է Թէրնօ պէյի դէմ ։

— Ելմտական պաշտօնատունը 3000 ռակոյ փոխառութիւն մ'ըրաւ Օսմ. Կայս. պանքայէն, առաջիկայ Պայրամի տօնին առթիւ ամսաթուղակ վճարելու համար ։

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Ամեն Ս. Պատրիարք Հօր առողջական վիճակը շաքթուս նոր երեւոյթ մը չ'ընծայեց ։ Զորեքջարթի երեկոյ դարձեալ բժշկական խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ որոյ հրաւիրուած էր, բացի Ն. Սըրբաղնութիւնը խնամուլ պատուարժան բժիշկներէն, Տօթ Զամպաքօ, որ նոյն օրը վերադարձած էր Քոթհէնակի բժշկական Վեհաժողովէն ։ Տօթ Զամպաքօ բնաւ վրտանգալից չէ գտած Նորին Բարձրութեան վիճակը, գիտնալով հանդերձ թէ սրտի հիւանդութիւնը կրնայ յետոյ մեծ դեր կատարել ։ Արդ, որքան որ հիւանդութիւնը բաւական յառաջացած է, սակայն վերջին

խորհրդակցութեամբ սա համադրումը գոյացաւ բժշկաց քով թէ՛ Նորին Սրբազնութեան վիճակը հեռի է անյոյս լինելէ, որպէս ու մանք գուշակել ուզելով նախալճած էին, թէ յարատեւ կանոնաւոր խնամօք հիւանդութիւնն աստիճանաբար բարւոքելով առողջութիւնը պիտի վերահաստատուի, և երկար տարիներ եւս կրնայ ապրիլ, ~~պէտք~~ միշտ զգոյշ լինելով մեծ յուզումներէ՝ քանի որ սրտի հիւանդութիւնն է այսօր տիրողը։

— Քաղաքական ժողովք իւր շարժական նիստն ընելով այս չորեքշաբթի, ընդատենապետութեամբ Մագսուտեան Վսեմ Սիմոն պէյի, զբաղեցաւ 18 ի չափ ընթացիկ գործերով և տնօրինութիւններ ըրաւ։

Ի մէջ այլոց, գանձանակաց շրջաբերութեան և Պատրիարքարանի աւանդից սընտուկին համար Տնտեսական խորհրդոյ կողմէ նախապէս պատրաստուած ուրոյն ուրոյն հրահանգները քննելով, ընդունեց և գործադրութիւնն յանձնեց Տնտեսական խորհրդոյ։

Նկատելով որ Ղալաթիոյ Թաղական խորհուրդը կը պնդէ իւր հրաժարականին վրայ, յանձնաժողով մը կազմեց, պաշտօն տալով նմա տնօրինել պարտուց բարձման միջոցները, բառնալ Թաղ. խորհրդոյ պաշտօնաւարութիւնը դժուարացնող պատճառները, ընտրելաց ցանկ մը պատրաստել Թաղ. խորհրդոյ մը կազմութեան համար և վարել եկեղեցւոյն և Թաղին գործոց տեսչութիւնը մինչեւ ցվերոյիչեալ կարգադրութիւնս։

Միասնէտիւն Մարգար աղա, որ Ղալաթիոյ Թաղային անտուկէն ունեցած առնելիքին վճարման ընդ երկար յետաձգման պատճառաւ անցեալ չորեքշաբթի Քաղ. ժողովոյ Վսեմ Ատենապետ Պէյին դէմ անպատշաճ կերպիւ վարուած էր և այդ վարմունքը դատաւարտելի կը նկատուէր, յատուկ գրով մը Քաղաքական ժողովէն ներում խնդրած լինելով, ներուեցաւ և հետեւաբար ուրիշ տնօրինութեան հարկ չի մնաց։

— Ամասիայէն նորեկ ճամբորդը կը պատմեն թէ հանգուցեալ Տ. Եղեսեան Սրբազանի սենեակն, յորում պահուած կային գոյքն ու գրեանքն և զոր կնքած էր տեղական կառավարութեան ընդհանուր դատախազի օգնականն, բացուեր է, և տակ-

նուկրայ ելեր են բոլոր գոյքն ու թուղթերն, և թէ կառավարութիւնն իմանալով՝ քանի մը կաակածելի մարդիկ ձերբակալեր, բանտարկեր ու հարցաքննութեան ենթարկեր է։

— Ետիրնէի հրաժարեալ առաջնորդ Գեր. Տ. Արիստակէս Եպիսկոպոս մայրաքաղաքս վերադարձաւ։

— Հաճընոյ բռնի ամուսնութեան դէպքը, զոր համառօտիւ պատմած ենք Մարտի օգոստոս 25 ի թուոյն մէջ, կայսերական կառավարութեան և ազգային Պատրիարքարանի ուղարկութեան առարկայ եղած են։ Այս քստմնելի դէպքի մանրամասն պարագայք հետզհետէ երեւան գալով և ստուգուելով, ընդհանուր նողկանք պատճառած են մայրաքաղաքիս ո՛չ միայն Հայ, այլ օտար հասարակութեանց։ Հակառակ տեղական մէկ երկու թերթերու ջանից, որք խնդրոյն կարեւորութիւնը տկարացնելու և իրողութիւնները խեղաթիւրելու կը միտին, օտար թերթեր իսկ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւին խնդրոյն ելից և հետզհետէ առնուած տեղեկութիւնները կարտապեն։ Խնդիրը լրագրական շրջանակի մէջ յուզուելով հանդերձ, պաշտօնական շրջանակի մէջ մտած է այժմ։

Բռնագատեալ օրիորդին հայրը Գլորիա Եաչարեան աղա սեպտեմբեր 5 թուով հեռագիր մ'ուղղած է ազգային Պատրիարքարանին, ծանուցանելով թէ՛ առ Բարձր Մեծ Եպարքոսն և առ Դատական Վսեմ Նախարարն օգոստոս 25 թուով բողոքադիր ուղղած և դատ պահանջած է, և ազգային Պատրիարքարանի միջնորդութիւնը կը հայցէ։

Աւասիկ առ Բ. Դուռն ուղղեալ հեռագրոյն ամփոփումը։

« Հաճընոյ չօրպաճիներէն Շըխըրտումեան, Պէհատըրեան, նոցա գրագիր Մարտիրոս և Տ. Ստեփան քահանայ՝ Գլորիա Եաչարեան աղայի 15 տարեկան Նարկիզ անուն աղջկին առեւանգելով, ամուսնացուցած են իւր չուգած մէկ անձին հետ և կուսութիւնը պղծել տուած են խժդժական բռնութիւններ (ճեպլեալը շահլեալ) ի գործ դնելով անոր վրայ։ Բողոքելով այս բարբաբոսութեան դէմ, աղջկան հայրն հրապարակային դատ կը պահանջէ Ատանայի

մէջ, խնդրելով որ հոն տարուին բռնութեան հեղինակները: Կը յաւելու թէ աղջիկն այժմ իսկ այդ բռնաւորաց ձեռք և նոցա սպառնալեաց ներքեւ կը գտնուի և թէ անոնք կ'աշխատին բռնի ստորագրութիւններ կորզել աղջիկէն: Գրգեալաբեան արդարութիւն կը պահանջէ Վեհափառ Սուլթանին գթութեան ապաւինելով:»

Արեւելքի Աստու. 10 ի թուոյն մէջ հրատարակեցաւ նաեւ Գրգեալաբեան Աղայի իւր մէկ բարեկամին ուղղեալ ընդարձակ նամակն, յորում մանրամասնաբար պատմած է իւր աղջկան, (որ Նարիկի բռնի ամուսնութիւնն: Այդ նամակ, իւր ռաւական պարզութեան մէջ, յուզիչ եւ սրտաշարժ գրուած մ'է, եւ Հաճընոյ չորսականներուն եւ Բէքմէզեան Նախկոպտին արարքը մերկապարանոց կը յայտնէ: Աշտահար հայրը կը գրէ ի մէջ այլոց.

«Եւ ահա Յուլիսի 23 դ. երեքշաբթի գիշեր, կես գիշերուն, չորսաճըներ 150 ի չափ կուսակիցներով կը ժողովին Տ. Ստեփանի տունը: Կառավարութենէն օստիկաններ բերել կուտան որ աղջկան պակագրութեան դէմ դժուարութիւն չենէ: Աղջիկս այս միջոցին կիսանայ թէ կուզուի բռնի պակել զինք: Գետին կիսնայ վշտահար, կը պոռայ, կաղաղակէ, կարտասուէ: Ժամ մը կը պոռայ թէ չուզեր: Բայց օգուտ չընէր: Վախեցնելով, ստիպելով, պակի արարողութիւնը կը կատարեն: . . . » և ըն:

Հրատարակեցաւ նաեւ տարաբաղդ օրիորդին մէկ նամակը, զոր բռնի ամուսնութեան օրէն առաջ իւր ընտանեաց մէկ ծանօթին ուղղած է ի Պոլիս և այս խնդրոյն վրայ իւր զգացումը և դառն կացութիւնը կը բացատրէ, նոյնութեամբ նախագուշակութեամբ մը կարծես:

Արեւելքի Վարչական Խորհրդոյ անդամներէն մին չորեքշաբթի օրը պատիւ ունեցաւ ներկայանալու Ղատական Նախարարութեան և մանրամասնօրէն բացատրելու Հաճընի բռնի ամուսնութեան պարագայները, խնդրելով որ արդարութիւնն ի գործ դրուի: Ղատական Նախարարութիւնը բարեհաճեցաւ յայտարարել թէ պարտաւորութիւն կը համարի իրեն՝ խնդիրը քննել առաջաօրէն և պատժել յանցաւորները, ինչ դասու և դիրքի ալ վերաբերին: Իրեւ ապացոյց իւր արդարասիրութեան, Նախարարութիւնն հաճեցաւ նոյն երեկոյին իսկ, աղբու հեռագիր մը ղրկել Ատանայի նա-

հանգին դատական քննչին, սլառուիրելով որ ամենայն անկողմնակալութեամբ քննէ զայս խնդիր և արդիւնքը մինչեւ 15 օր անպատճառ հաղորդէ առ Բ. Դուռն: Դատական Նախարարութիւնը միանգամայն յանձնարարեց Արեւելքի Վարչութեան որպէսզի սոյն քսամնելի եղելութեան վրայ իւր տակաւին ստանալիք տեղեկութիւններն հաղորդէ Նախարարութեան, ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն:

Միւս կողմէ Կրօնական Ժողովը իւր երկուշաբթի աւուր նստին մէջ տեսնելով Օրիորդ Նարիկի հօր առ Պատրիարքարան ուղղեալ հեռագիրն և իմանալով որ դեռ ո'ն է պաշտօնական հեռագիր հասած չէ ի Պատրիարքարան ի պատասխանի իւր առաջին հեռագրոյն, որոշեց երկրորդ հեռագիր մը ուղղել Հաճընոյ առաջնորդութեան և ծանուցեալ անցքին վրայ ստոյգ և մանրամասն տեղեկութիւն պահանջել: Որոշեց նաեւ հեռագրել առ Տ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիոյ, և ծանուցանելով թէ յիշեալ անցքն ո'չ միայն Հայ ազգին, այլ և համայն քրիստոնեայ աշխարհի գայթակղութիւն և նոյն կանք պատճառած է, ի տեղեկադրութիւն հրա իրել զՆորին Սրբազնութիւն:

Գրգեալաբեանի աղջիկն՝ Նարիկը, բռնի ամուսնութենէն 15 օր վերջը նամակ մ'ուղղելով իւր հօր, իւր խղճալի վիճակը նկարագրած եւ բողոքած է իւր վրայ եղած բարբարոսական բռնութեան դէմ: Այս նամակ կը հրատարակուի այս աւուր Արեւելքի մէջ:

— Աղգային ժողովոյ ժԱդ նիստը տեղի ունեցաւ այս ուրբաթ, 14 սեպտ. ի Ղաւթիա, ընդ առենապետութեամբ Տիգրան էֆէնտի Եռասուֆեանի: Ժողովը յետ մի քանի առեւտական գործողութեանց, առաջնորդական խնդրոյն անցնելով, նախորդ նըստերուն մէջ սկսուած վիճաբանութիւնը շարունակեցաւ մի քանի ժամ և հուսկ ուրեմն վիճաբանութեան փակումն որոշուելով, Ժողովը միաձայնութեամբ քուէարկեց եւ ընդունեց Յ. Մերեթմզուլի էֆէնտիի կողմէ ներկայացեալ հետեւեալ բանաձեւն:

«Աղգային Ժողովը կորոչէ որ, Վարչութիւնն իրեն ներկայացնէ ցուցակն այն «այն դաւառաց, յորս ժողովուրդն անկաւ» «րող է Սահմանադրութեան տրամադրու-

« Թեանց համաձայն ընտրել իւր առաջ-
« նորդն , բացատրէ այս անկարողութեան
« պատճառներն եւ Ազգային Ժողովէն ար-
« տօնութիւն առնլէ յետոյ՝ ի հարկին կարգէ
« այդ գաւառաց Առաջնորդներն » :

Ապա Ժողովն անցաւ Պէկեան Էֆէնտիի
երեսփոխանութեան վաւերացման խնդրոյն ,
որոյ վրայ վիճաբանուելով , խնդիրն յաջորդ-
նստին թողուեցաւ , փակման ժամն հասած
լինելուն պատճառաւ :

Ազգային Ժողովոյ նոյն նստին մատուց-
ուեցաւ , Երուսաղիմայ Ազգային վանուց
1885 - 84 տարուոյ հաշուեցոյցն եւ 1884 -
85 տարուոյ ելմտացոյցն : Հաշուեցուցէն կը
ստուգուի , թէ Ս . Աթոռոյն պարտքն այս
տարի ալ աւելցած է , եւ հետզհետէ պիտի
աւելնայ , եթէ տակաւին յապաղէ պարտուց
բարձման խնդրոյն կարգադրութեան գործն :

— Ար լեմբ , թէ Բ . Գուռը չէ ընդու-
ներ բողոքեալն ազգայնոց Ազգապետ Մեծ .
Յակոբ Էֆէնտիի հրաժարականը , պատճա-
ռելով թէ Յակոբ Էֆէնտի մեծ փորձառու-
թիւն ունի իւր վեշտասանամեայ պաշտօնա-
վարութեամբ , եւ հետեւաբար կրնայ օգտա-
կար հանդիսանալ թէ՛ Ժողովրդեան եւ թէ՛
կառավարութեան : Ար կարծուի , թէ Յա-
կոբ Էֆէնտի պիտի հարկադրի յետս կոշէլ
հրաժարականը եւ վերսկսիլ իւր պաշտօնա-
վարութիւնը :

— Տիվրիկի հրդեհեալ վարժարանի վե-
րաշինութեան ի նպաստ հանգանակութեան
պիտի ձեռնարկուի մօտերս , որոյ համար
յատկապէս տոմսեր կը պատրաստուին :
Յայտնի է , թէ յիշեալ վարժարանը՝ որ տա-
կաւին նոր կառուցեալ էր , հրոյ ճարակ
արուեցաւ , եւ հաստատուն կասկած կայ
թէ չարասէր անձինք անխղճաբար դործած
են այս մեծ ոճիրն :

— Գոհութեամբ կիմանա՞նք , թէ Գու-
զիչանի դայմագամ Ծահ Հիւսէյին պէյ իւր
վիճակին սահմանակից Խօփա եւ Աերկելիլը
հայ գիւղորէից բնակչաց ապահովութեան
համար ալ հոգ կը տանի , եւ այս տարի այն
կողմերն աւաղակութեանց դէպքեր չեն պա-
տահած :

— Կիպրոսի Ազգային Վարչութիւնը գը-
րեր է ի Պոլիս առ ներկայացուցիչն իւր ,
որ ծանուցանէ Պատրիարքարանի , թէ կըզգ-

ւոյն Հայ Ժողովուրդն առ այժմ Պոլսէն ա-
ռաջնորդ , փոխ - առաջնորդ եւ այլ ո՛ր
եւ է անուամբ եկեղեցական մը խնդրելու
պէտք չունի , թէ՛ կղզւոյն քահանաներէն
Տ . Յովհաննէսի յանձնուած է Ժողովրդական
հովուութեան պաշտօնն , եւ տեղական կա-
ռավարութենէն ալ վաւերացեալ է նորա
ընտրութիւնն ու պաշտօնը , եւ թէ՛ հե-
տեւաբար Պատրիարքարանի կը մնայ հաս-
տատել զնա , յղելով պէտք եղած պաշտօ-
նական գիրերն :

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԱՆՈՒՐՔ

ԱՓԱՆՍ ՌԻԻԴԵՐ

ԿՈՐՏՈՆ Ի ԽԱՐԴՈՒՄ

Գահիրէ , 24 սեպտ .

Վերջին օրերս Կորտոն զօրավարին ի
Խարդում տարած երկու յաղթանակաց վը-
րայ , որք հարկադրեցին ապստամբներն այդ-
քաղաքին պաշարումը վերցնել , զօրավար
Ուռլսի խորհուրդ կուտայ Բրիտանական կա-
ռավարութեան ետ առնուլ երկու վաշտ եւ
զօրք շրկելու հրամանն , որք պիտի միանա-
յին Կորտոն զօրավարին օգնութեան երթա-
լիք անգլիական բանակին :

ՏԵՍԱԿՅՈՒԹԻԻՆ ԵՐԻՅ-ԿԱՅՍԵՐԱՅ

Պերլին , 24 սեպտ .

Նաճիօնալ Ջայթունկ այսօր յօդուած մը
հրատարակելով երից կայսերաց տեսակ-
ցութեան վրայ , կ'ըսէ թէ Գերմանիա , Ռու-
սիա եւ Աւստրո-Հունգարիա ազդուաբար ոյժ
պիտի տան Ֆրանսական գործողութեան մը
Եգիպտական խնդրոյն մէջ :

ԳԼԽԱՎՃԱՐԻ ԴԱՂԱՐՈՒՄԸ ՅԵԳԻՊՏՈՍ

Նաճիօնալ Ջայթունկ կ'ըսէ թէ Ֆրանսա
արդէն պահանջեր է որ ետ առնուի Նու-
պար փաշայի նախարարութեան տուած ու-
րջումն , որով հանրային սլարտուց գլխա-
վճարն առժամայէս կը դադրի ցվճարումն
առաջիկայ կտրոններու :

Արտօնատէր

Կ . Ս . ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ ԱՐԵՒԵԼԻԲ ԼՐԱԳՐՈՅ

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ
ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՅ

ՊԱՏԿԵՐԱԶՄԱՐԴ ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ
Ե Ի

ԵՐԿՐԱՅՈՒՓՈԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ
Հանդէս Բաժնէն Խնդրէնէրով
և Հարժանեամբ

Կը պարունակէ 50 ի հափ մեծ ու փոքր
պատկերներ :

Գին 5 դահեկան արծաթ

Շատ գնողներու համար մասնաւոր
զեղչ կը լինի :

Կը գտնուի բոլոր գրավաճառաց
քով : Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ
Ընկերութեանց գրասենեակն , Կա-
լաթա , Կէօչէ Օղլու խան , թիւ 12 :

Հայոց Միացեալ Ընկերութեանց
կնիքը չկրող օրինակներն անվաւեր են :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ան գտնուի Գործարարաց

ԳՈՐԾԱՐԱՆ
ՄԵՏԱՂԵԱՅ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՏՈՒՓԵՐՈՒ

մասնաւորապէս Ծխախոտի համար

ԲԱՐՈՒՆԱԿ ԲՈՒԱՏԵԱՆ

Մենաշնորհեալ յՕսմ. Կառավարութենէ

ՇԱՏ ԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ ԹԻԹԵՂԵԱՅ տու-
փեր մասնաւորապէս Ծխախոտի համար :

Գործին գեղեցկութեան , դիմացկունու-
թեան և այլ ամենայն տեղեկութեանց հա-
մար դիմել առ

Խ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ղալաթէա , Մահմադիէ Գալայ Բէ- 38

Պէլէ , Ենչէ-ճաֆ , Զէնչէնէրէ Գալայ » 54

Գաւառներէ ուղղակի յանձնարա-
րութիւնք փութով կը կատարուին :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ԳԻՐԷՃ - ԳԱՐՈՒ , թիւ 3 վաճառա-
տան մէջ մեծ և փոքր քանակութեամբ
կը վաճառուին հետեւեալները :
Հանքածուխ , ՆիւթիւՍԼ և ԲԱՐՏԻՅ .
Զուլեղի երկաթ , ԲԱՆՏԷՐ — թիւ 1 .
Հանքածուխ , ԲՕԲ .

Տոկոսն աղիւս , ԲՕՎԷՆ .

Բոլոր այս ապրանքներն ընտիր տե-
սակէ են և ԽԻՍՏ ԱԺԱՆԳՆԵՐՈՎ կը վա-
ճառին :

VICHY

Վ Ի Շ Ի

Վարչութիւն , Փարիզ 8 Պուլէա

Մահմադիէ .

GRANDE GRILLE . — Աւաղան տկարու-
թիւնը , մարսողական ճանապարհաց հի-
ւանդութիւնը , լեարդի և փայծաղի խը-
ցումն , ներքին գործարանաց խցումը , մաղ-
ձային քար և այլն :

HOPITAL . — Մարսողական ճանապարհաց
հիւանդութիւնը , ստամոքսի ծանրութիւն ,
դժուարամարսութիւն , ախորժակի պակա-
սութիւն ստամոքսի , ջրացաւ , անմարսու-
թիւն :

CÉLESTINS . — Երկամանց և փամփուշ-
տի տկարութիւնը , միզական աւազ և մի-
զական քար , յօդացում , չաքարախտ (Տիա-
պէթ) , սպիտակուց — միզական (Ալպիւմի-
նիւրի) :

HAUTERIVE . — Երկամանց և փամփուշ-
տի տկարութիւնը , աւազ , քար , յօդա-
ցաւ , չաքարամիզութիւն , սպիտակուց — մի-
զական :

Աղբիւրին անունը պէտք է փնտռել չի-
չերու քարախլին վրայ :

Պուլայ ամեն դեղագործաց և դեղավա-
ճառաց քով կը գտնուի :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

Թարգմանիչ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Հրատարակիչք

Նշան Կ. Պէրպերեան և Ս. Տէօ՛ւլէիեան

Էօժէն-Սիւ դաղըիացի մեծանուն վիպա-
սանին սոյն նշանաւոր գործը, զոր Մասիսի
Մեծ. Խմբագիր Կ. Ս. Իւթիւճեան էֆէնտի
ասկէց 18 տարի առաջ թարգմանած և իբր
թերթօն Մասիսի միջոցաւ հրատարակելէ
յետոյ՝ զատ ևս տպագրած էր, ժամանակէ
մը ի վեր սպառած լինելով, այս անգամ
Մեծ. Թարգմանիչը կրկին աչքէ անցուցած,
լեզուին մաքրութեանն և ոճերու գեղեցիկ
բացատրութեանց՝ մեծ խնամք տարած և
մասնաւոր պայմանաւ մը մեզ յանձնած է
երկրորդ անգամ տպագրել սլափերաղարդ :

«Թափառական Հրեայն» 1600 մեծադիր
երեսի մօտ, 4 ընդարձակ հատորէ պիտի
բաղկանայ, մաքուր թղթի վրայ գեղեցիկ
տպագրութեամբ :

Ամբողջ գործը պիտի պարունակէ Գաղ-
ղիերէն ընտիր տպագրութենէ մ'ընդ օրի-
նակեալ և մասնաւոր խնամք փորագրեալ
100ի մօտ գեղեցիկ պատկերք, և բացի ա-
սոնցմէ, 60ի շափ ալ մեծադիր և ընտիր
պատկերներ, որք մաքուր թղթի վրայ զատ
տպագրուելով պիտի զետեղուին գործոյն
մէջ :

Մէն մի հատորին բաժանորդագրութեան
գինն է կանխիկ 25 դրուշ :

Տասն եւ վեց երեսէ բաղկացեալ մէն մի
թերթ 50 փարայ :

Գաւառաց համար թղթատարութեան
ծախքն միատեղ հաշուելով մէկ հատորին
գինն է 50 դրուշ :

Գաւառներէն բաժանորդ գրուիլ փա-
փաքոքը պարտին բաժանորդագինն կան-
խիկ յղեալ Խուրաստան Մանկանց հանդիսի
խմբագրատունն հետեւեան հասցէիւ .

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պօլիս Սուլթան-Համամ թիւ 14

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՌԸԼԻԵՆՍ

Ծովային ապահովագրութիւն : -Դի-
մել առ գործակաւարն ընկերութեան,
Պ. Ժ. Վ. Ուիթալ, Եօրկիատիս խան,
Պահչէ - գարու, Պոլիս . կամ Ղալա-
թիա, Ալէքսիատի խան թիւ 15 :

The «Economic» Co-Operative
Society Limited

«ԽՆԱՅՈՂԱԿԱՆ»

ԳՐՐԾԱԿԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Ղալաթիա, Վոյվօտա փողոց, Օսմ. կայս.
Պանքայլին դիմաց)

Տնօրէն ժողովոյ օգոստ. 3 ի նստին
մէջ որոշուեցաւ սահմանափակ թուով
որոշուող անդամներ ընդունիլ ընկերու-
թեան մթերանոցները. տոմսի մը գին
որոշուեցաւ տարեկան մէկ մէճիտիյէ
ամսոյս 15 էն սկսեալ . տոմս ունեցո-
ղն իրաւունք պիտի ունենայ ընկերու-
թեան մթերանոցէն ամեն ինչ գնել նոյն
նպաստաւոր գներով որով կը գնեն նոյն
խոյն քաջակէր անդամք :

Օգոստոս 15էն յետոյ ընկերութեան
Մատակարարին դիմելով կարելի է ըս-
տանալ տոմսեր և գնոց ցուցակներ :

Ղալաթիա, 5 սեպտեմբեր 1884

ԱԶԴ

Հայերէն և Ֆրանսերէն լեզուաց,
դաշնակի, կարի և ձեռի հմուտ վար-
ժուհի մը, կը փափագի դաստիարա-
կուհւոյ պաշտօն մը գտնել աղգային
վարժարանաց մէջ : Պէտք ունեցողք
կրնան դիմել Արեւելքի խմբագրատունը :